

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն

Ը. Գ Ի Ր Ք

Է. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



Պատրաստեց՝
Նուպար Արկ. Պերպլերեան

ԱՆԹԻԼԻԱՍ – ԼԻԲԱՆԱՆ
1988

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Դաս	Էջ
Ա. Քրիստոնեական	11
Բ. Տիեզերական ժողովներ	14
Գ. Նիկիական Հանգանակին Բովանդակությունը	19
Դ. Ամենասուրբ Երրորդություն	21
Ե. Եկեղեցի	24
Զ. Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն Խորհուրդները	27
Է. Մկրտություն	29
Ը. Դրոշմ	32
Թ. Ապաշխարություն	35
Ժ. Հաղորդություն	38
ԺԱ. Ս. Հաղորդութեան Խորհուրդին Արարողությունը (Ս. պատարագ)	41
ԺԲ. Ս. Պսակ կամ Ամուսնություն	45
ԺԳ. Ձեռնադրություն	48
ԺԴ. Ձեռնադրություն — Բ. Բաժին	52
ԺԵ. Պատուանուններ Հայ եոզեւորական Դատուն	56
ԺԶ. Կարգ Հիւանդաց կամ Վերջին Օծում	58
ԺԷ. Մեղք եւ Շնորհք	61
ԺԸ. Աստուծոյ Պատուիրանները	64
ԺԹ. Եօթը Առաքիներություններ եւ Եօթը Մոլություններ	66
Ի. Աղօթք	70
ԻԱ. Պահեցողություն	74
ԻԲ. Քրիստոսի Երկրորդ Գալուստն ու Մեռելոց Ցարությունը	77
ԻԳ. Վերջին Դատաստան, Երկինքի Արքայություն եւ Յաւիտենական Կեանք	80

Այն գիրքը կը հրատարակուի մեկենասութեամբ
ԾԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻՆ
 The Tzapik Baghdasarian Charitable Trust
 The First National Bank of Boston, Trustee

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ

Աստուծոյ օժանդակութեամբ կը հրատարակենք կիրակ-
 անօրեայ դպրոցներուն դասագրքերու շարքէն Ը. գիրքը, յատուկ
 Ը. դասարանի, որ համաձայն կիրակնօրեայի կրթական ծրագ-
 րին, նախատարտական դասարանն է:

Ասկէ առաջ, մեր ուսուցիչները կը գործածէին երանաշնորհ
 S.S. Բարզէն Աթոռակից Կաթողիկոսին պատրաստած Գրիս-
 տոնէական դասագիրքը: Յարմար նկատեցինք որ աւելի պար-
 զաքանուած, աշակերտներուն եւ ուսուցիչներուն մատչելի ու
 դիրահաղորդ Գրիստոնէականի դասագիրք մը պատրաստել:
 Որախ եւնք, որ մեր գործակիցներէն ու կիրակնօրեայ դպրոցին
 նուիրուած վաստակատու մշակներէն բարշ. Նուպար Սրկ. Պէր-
 պէրեան, ընդառաջելով մեր փափաքին, յանձն առաւ պատրաս-
 տութիւնը սոյն դասագրքին, զոր կը հրատարակենք մեկենասու-
 թեամբ Ծափիկ Պաղտասարեան հիմնադրամին:

Դասագիրքերը լաւ եւ եւ օգտակար, երբեմն ալ անշուշտ
 անհրաժեշտ, սակայն գիտատր դասագիրքը որեւէ նիւթին ուսու-
 ցիչը ինքն է: Ի՞նչ կ'արժէ պատրաստութիւնը նոր դասագիրքե-
 րու երբ ուսուցիչները իրենք տրամադիր չեն ինքնազարգացու-
 մի, առաւելագոյն ճիգով, իրական գիտութեան եւ աստուածա-
 պաշտութեան ձեռք բերումին:

Բասներորդ դարու մանկավարժներ կարեւորութեամբ կը
 շեշտեն ուսուցիչներու պատրաստութեան պարագան այլեւ
 ուսուցչին պատրաստուելու, իր ասանդելիք դասին ամբողջական
 խրացման, նախ քան դասարան մտնոքը: Ուսուցիչը միայն դա-
 սարանին մէջ ուսուցիչ չէ. ան պարտի դասարան մտնելէն առաջ
 վերատեսութեան ենթարկէ իր ե՛ր նախորդ դասը ե՛ր նոր դասը
 եւ միշտ նորութեամբ մը դասարան մտնէ, որպէսզի յաջող դա-
 սաւանդութիւն ունենայ:

Քրիստոնէական դասագիրքը, որ այժմ ունիք ձեր ձեռքերուն մէջ, միայն ուղեցոյց է եւ առաջնորդ. տկար է այն ուսուցիչը, որ ինքզինք կը բանտարկէ իր ձեռքը գտնուած դասագիրքին մէջ միայն. կիրակնօրեայ դպրոցի մէջ աշխատող ռեւէ կրթական մշակ, ամէն բանէ առաջ, աղօթքով ինքզինք պիտի զօրացունէ եւ ապա Աստուծոյ օրհնութեամբ պիտի աշխատի իր ամանդելիք դասը, նիւթը պատրաստել օժանդակ այլ գիրքերով:

Դիրքին, անլի ճիշդ պատասխանատուութենէ խուսափիլ է, ըսել թէ «ժամանակ չունիմ», «աղբիւրներ չկան» եւ կամ «պայմաններն ու պարագաները չեն ներեր»: Կեանքի դժուարութիւնները տազնապներն ու նեղութիւնները բոլորի համար են: Էականը մարդ իր կոչումին եւ առաքելութեան գիտակցութենէն մղուած կատարէ իր պարտականութիւններն ու պարտատուութիւնները:

Կիրակնօրեայ դպրոցի գործը նոտրական է. այդ գործին նետուողը, ամէն բանէ առաջ, պէտք է խորապէս հաւատայ կիրակնօրեայի եւ Քրիստոնէական դաստիարակութեան անհրաժեշտութեան, որպէսզի կարենայ աշխատիլ. առանց հաւատքի կարելի չէ գործել, մասնատրաբար կիրակնօրեայ դպրոցէն ներս: Հաւատքը այն զգացումն է որ մարդը, այս պարագային ուսուցիչը, կենդանիօրէն կապած կը պահէ իր գործին: Հաւատքով սպառազինուած եւ աղօթքով զօտեպնդուած ուսուցիչը անպայմանօրէն յաջող եւ սիրելի ուսուցիչ մը կ'ըլլայ:

Արդ, սիրելի ուսուցիչներ, նախ զօրացէք հաւատքով, որպէսզի ըլլաք «ընտիր անօթ»ներ Աստուծոյ խօսքին, ձեր սիրտն ու հոգին մաքրեցէք ամէն տեսակի ախտերէն, մոլորութիւններէն, որպէսզի Աստուծոյ շնորհքն ու օրհնութիւնը ըլլան ձեր կեանքի ուղեցոյցը, եւ այն ատեն վստահ եղէք, որ պիտի կարենաք ձեր ինձամքին յանձնուած հայ մանուկները առաջնորդել Յիսուսի, որ զօրագլուխն է մեր հաւատքին եւ հիմնադիրը եկեղեցիին, այն եկեղեցիին որուն հովանին կը վայելենք մօտատրապէս երկու հազար տարիներէ ի վեր:

Այստեղ կ'ուզենք մեր մասնատր շնորհակալութիւնը յայտնել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աագ միաբաններէն՝ Գեորգ Արտաւազդ Ս. Արք. Թրթռեանի, որ սիրով յանձն առաւ քննել եւ կատարել անհրաժեշտ սրբագրութիւններ «Քրիստոնէական» դասագրքին:

Բարոք գործածութիւնը դասագրքին պիտի ըլլայ վարձքը դասագիրքը պատրաստողին, սրբագրողին եւ հրատարակողին:

Սեպտեմ 8. Վրդ. Սարգիսեան
Վարիշ Տնօրէն

Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներուն

8 Փետրուար, 1988

Անթիլիաս - Լիբանան

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Աստուծոյ օգնութեամբ ի լոյս կ'ընծայենք «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»ու ութերորդ թիւը է. դասարանի աշակերտներուն համար:

Մեր իղձն ու փափաքն է որ հայ պատանիները սերտեն Աստուծոյ խօսքը, տեղեակ ըլլան իրենց մայրենի Եկեղեցիին ուղղափառ հասարակին, դասանանքին, օրէնքներուն եւ կանոններուն: Այդ ուղղութեամբ ջանացի՛նք օգտակար հանդիսանալ եւ մեր համեստ բաժինը բերել սոյն դասագիրքով, որուն պատրաստութեան ատեն որպէս ուղեցոյց մեր առջեւ ունեցանք Երջանկայիշատակ Բարգէն Աթոռակից Կաթողիկոսի «Քրիստոնէական» եւ Գերշ. Տէր Սիոն Արք. Մանուկեանի «Քրիստոնէական Վարդապետութիւն հայ Եկեղեցոյ» գիրքերը:

Յոյժ կարեւոր է մեր նորահաս սերունդին համար կրօնաբարոյական հայեցի դաստիարակութիւնը: Հայ պատանին ու երիտասարդը առանց այդ դաստիարակութեան չեն կրնար ճողոպրիլ իրենց առջեւ ցցուող փորձութիւններէն ու որոգայթներէն:

Հայաստանեայց Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու իտեպն է՝ հայ մանուկը տոգորել Աստուծոյ խօսքով եւ իր մայրենի եկեղեցոյն օրէնքներով, որպէսզի ան դառնայ տիպար Քրիստոնէայ հայրորդի մը եւ իր վարք ու բարքով պատիւ բերէ իր ազգին, ու հանդերձեալի մէջ ալ արժանանայ Երկինքի արքայութեան՝ Տիրոջ ողորմութեամբ:

Վերոյիշեալ իտեպի իրագործման ձգտումով պատրաստուած է «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»ու շարքը:

Ինչպէս որ նախորդ դասագիրքերուն մէջ յիշած ենք, դարձեալ նոյն խօսքը կ'ուղղենք մեր կիրակնօրեայ դպրոցներու շարգելի մշակներուն. — «Յաջող դաստիարակութիւն մը ունենալու

համար ուսուցիչը լաւ իրացուցած ու պատրաստած բլլայու է դասը: Իր մանկավարժական մեթոտներուն միացնելու է հաւատք, աղօթք եւ օրինակելի կեանք: Քրիստոնէական կրօնքի դասաւանդութիւնը առանց աղօթքի եւ Աստուծոյ զօրութեան չի կրնար հասնիլ իր նպատակին»:

Նուպար Սրկ. Պէրպէրեան

Ա. Գաս

Քրիստոնէական

— Ո՞ր գիրքերը կը կոչուին ՔՐԻՏՈՆԷԱԿԱՆ:

— Քրիստոնէական կը կոչուին այն գիրքերը որոնք կը սորվեցնեն Քրիստոնէական կրօնքի դաւանութեան սկզբունքները, օրէնքներն ու Աւետարանի պատուիրանները:

— Ի՞նչ կը նշանակէ ԿՐՕՆՔ:

— Կրօնք կը նշանակէ՝ մարդ արարածին գաղափարը, Հաւատքը, դաւանութիւնն ու պարտականութիւնը իր Արարիչին Հանդէպ եւ առ այդ իր յարաբերութիւնը Անոր հետ:

— Ի՞նչ կը նշանակէ ՀԱԻԱՏՔ:

— Հաւատք կը նշանակէ՝ ամուր փստահութիւն: Կրօնական առումով կը նշանակէ Հաստատ Համոզում Աստուծոյ, Անոր արարչագործութեան եւ յայտնութիւններուն վրայ:

— Ի՞նչ կը նշանակէ ԴԱԻԱՆԱՆՔ:

— Դաւանանք կը նշանակէ՝ փաստուած եւ ընդունուած կրօնական Համոզում:

— Ի՞նչ կը նշանակէ ԴԱԻԱՆԻԼ:

— Դաւանիլ կը նշանակէ՝ Համոզումով ընդունուած Հաւատքը խոստովանիլ, Հաստատիլ ու արտայայտել՝ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով:

— Ի՞նչ է ՀԱԻԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ կամ ՀԱԻԱՏԱՄՔԸ:

— Հաւատոյ Հանգանակը քրիստոնէական կրօնի Հաւատայիքներուն ամբողջութիւնն է: Կրնանք ըսել թէ՛ Հանգանակը կամ Հաւատամքը կազմուած առաջին քրիստոնէականն է:

— Ի՞նչ կը նշանակէ ԲԱՆԱԶԵԻ:

— Երբ որեւէ խնդիր, խօսք կամ գաղափար յստակ եւ որոշ բառերով խմբագրուի ու ներկայացուի (ընդհանրապէս ժողովներու մէջ), կը կոչուի բանաձեւ:

— Որո՞նք բանաձեւած եւ վաւերացուցած են հաւատոյ հանգանակները:

— Առաջին հանգանակը բանաձեւած եւ վաւերացուցած են առաքեալներ որ կը կոչուի ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ: Երկրորդ հանգանակը՝ աւելի ընդլայնուած ձեւով խմբագրուած է 325ին Նիկիոյ մէջ գումարուած առաջին տիեզերական ժողովին կողմէ, որ կը կոչուի ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ կամ ՀԱԻԱՏԱՄՔ:

— Ի՞նչու համար խմբագրուած են հաւատոյ հանգանակները:

— Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ հաւատացեալները ուղղափառ հաւատքի ու դաւանութեան մէջ առաջնորդելու եւ մոլորեցուցիչ մարդոց սխալ քարոզութիւններէն զգուշացնելու համար:

— Ի՞նչ կը նշանակէ ՌԻՂՂԱՓԱՌ:

— Ուղղափառ կը նշանակէ՝ շիտակ կարծիք, ուղիղ հաւատք:

Ընթերցում

Առաքելական Հանգանակ

Կը հաւատամ ամենակալ Հայր Աստուծոյ, երկինքի եւ երկրի արարիչին, եւ անոր միածին Որդւոյն՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ Սուրբ Հոգիով յղացաւ եւ ծնաւ կոյս Մարիամէն. չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ եւ թաղուեցաւ, եւ երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներէն. երկինք համբարձաւ

եւ ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ, ուրկէ պիտի գայ դատելու ողջերն ու մեռելները:

Կը հաւատամ Սուրբ Հոգիին, ընդհանրական սուրբ Եկեղեցիին, սուրբերու հաղորդութեան, մեղքերու թողութեան, մարմինի յարութեան եւ յաւիտենական կեանքին. ամէն:

Տիեզերական ժողովներ

— Ո՞ր ժողովը կը կոչուի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ:

— Այն ժողովը, որուն կը մասնակցին Քրիստոսի ընդհանրական եկեղեցւոյն բոլոր մասնաճիւղներուն պատգամաւորները՝ լուծելու համար դաւանական հարցեր, կը կոչուի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ: Եթէ ժողով մը գումարուած ըլլայ ընդհանրական եկեղեցւոյ անդամ եկեղեցիներուն միայն մէկ մասին կողմէ, չի կրնար տիեզերական կոչուիլ:

— Հայաստանեայց եկեղեցին քանի՞ տիեզերական ժողովներ կ'ընդունի:

— Հայաստանեայց եկեղեցին կ'ընդունի տիեզերական երեք ժողովներ. — ա) Նիկիոյ ժողով, բ) Կոստանդնուպոլսոյ ժողով եւ գ) Եփեսոսի ժողով:

— Ե՞րբ եւ ինչո՞ւ համար գումարուեցաւ ԱՌԱՋԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ:

— Չորրորդ դարուն սկիզբը, երբ Քրիստոնէութիւնը ազատ հռչակուած էր բովանդակ հոգմէական կայսրութեան սահմաններուն մէջ եւ քրիստոնեաներ սկսած էին ազատ շունչ քաշել, Աղեքսանդրիոյ մէջ հրապակ եկաւ Արիոս անունով եկեղեցական մը որ սկսաւ մոլորեցնել հաւատացեալները իր սխալ քարոզութիւններով: Արիոս կը քարոզէր եւ կ'ըսէր թէ Յիսուս Հօր Աստուծոյ էութենէն չէր, այլ ստեղծուած արարած մըն էր: Արիոս իր մոլորութիւնը սկսաւ տարածել նաեւ Պաղեստինի մէջ եւ անկէ ալ անցաւ փոքր Ասիա ու պատճառ դարձաւ խռովութիւններու:

Ուղղափառ եպիսկոպոսներ եւ եկեղեցական առաջնորդներ դէմ կեցան Արիոսի մոլորութեան որ խոտոր կը համեմատէր Աւետարանի ճշմարտութեան:

Այս մոլորութեան առաջը առնելու համար 325 թուին գումարուեցաւ Քրիստոսի ընդհանրական եկեղեցւոյ առաջին տիեզերական ժողովը փոքր Ասիոյ Նիկիա քաղաքին մէջ Կոստանդիանոս կայսեր նախագահութեամբ: Այս ժողովին մասնակցեցան 318 ներկայացուցիչ հայրապետներ աշխարհի չորս ծագերէն: Հայաստանեայց եկեղեցւոյ կողմէ զրկուած ներկայացուցիչն էր Ս. Գրիգոր Լուսաւորչի որդին՝ Արիստակէս հայրապետ:

Այս ժողովին մէջ քննուեցաւ ու դատապարտուեցաւ Արիոսի մոլորութիւնը եւ խմբագրուեցաւ հաւատոյ հանգանակ մը, որպէսզի զայն ուղեցոյց ունենային աշխարհի բոլոր հաւատացեալները՝ ուղղափառ հաւատքի մէջ առաջնորդուելու համար:

Հաւատոյ այս հանգանակը կոչուեցաւ ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ կամ ՀԱԻԱՏԱՄՔ, որ կ'արտասանուի աշխարհի բոլոր ուղղափառ եկեղեցիներուն մէջ:

Ժողովը զբաղեցաւ նաեւ ընդհանրական եկեղեցին հետաքրքրող այլ հարցերով եւ կանոններ հաստատեց:

— Ինչո՞ւ համար գումարուեցաւ ԵՐԿՐՈՐԴ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ:

— 381 թուականին Կոստանդնուպոլսոյ մէջ գումարուեցաւ տիեզերական երկրորդ ժողովը, որուն մասնակցեցան 150 ներկայացուցիչ հայրապետներ աշխարհի զանազան կողմերէն եւ դատապարտեցին Կոստանդնուպոլսոյ պատրիարքական Աթոռին վրայ նստող Մակեդոնը որ շեղած էր ընդհանրական եկեղեցւոյ ուղղափառ դաւանութենէն եւ կը մոլորեցնէր շատերը: Ան կ'ուրանար Սուրբ Հոգիին անձնաւորութիւնն ու Աստուածութիւնը:

Հայոց եկեղեցին չկրցաւ իր ներկայացուցիչը զրկել այս ժողովին, հաւանաբար Հայաստանի քաղաքական անըպաստ պայմաններուն պատճառով: Սակայն համաձայն դաժնուեցաւ անոր որոշումներուն եւ ընդունեց զանոնք:

— Ինչո՞ւ համար գումարուեցաւ ԵՐԿՐՈՐԴ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ:

— 431 *Թուակահանին Եփեսոսի մէջ գումարուեցաւ տիեզերական երրորդ ժողովը, որուն մասնակցեցան 200 ներկայացուցիչ հայրապետներ եւ դատապարտեցին Կոստանդնուպոլսոյ Նեստոր պատրիարքը որ մոլորած էր ուղղափառութենէ եւ կը մոլորեցնէր հաւատացեալները: Ան կը քարոզէր թէ Յիսուսի մէջ կային երկու տարբեր բնութիւններ՝ աստուածային եւ մարդկային: Նոյն ատեն կ'ըսէր թէ Ս. Կոյս Մարիամ Յիսուսի մարդկային բնութեան միայն ծնունդ տուած է եւ Աստուածութիւնը յետոյ պարզապէս բնակած է Անոր մէջ: Հետեւաբար կ'ուրանար Ս. Կոյս Մարիամին Աստուածածին ըլլալը:*

Հայաստանեայց եկեղեցին Եփեսոսի ժողովին ալ չկրցաւ ներկայացուցիչ դրկել, սակայն օրուան կաթողիկոսը Ս. Սահակ հայրապետ Կոստանդնուպոլսէն վերադարձող իր աշակերտներուն միջոցաւ ստացաւ Եփեսոսի ժողովին որոշումները եւ ընդունեց զանոնք:

Ընթերցում

Նիկիական Հանգանակ

Հաւատամքի մի Աստուած, ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի եւ երկրի, երեսելեաց եւ աներեսութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած նշմարիտ՝ յԱստուծոյ նշմարտէ ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեսելիք եւ աներեսոյթ: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատա-

րելապէս ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, նշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարես եւ յԱւետարանս: Որ էջն ի Յօրդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաիտենից հոգւոց եւ մարմնոց, յարժայութիւնն երկնից եւ ի կեանսն յաիտենականս:

Նիկիական հանգանակին աշխարհաբար թարգմանութիւնը:

Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամենակալ Հօր, ստեղծիչին երկնիքի եւ երկրի, տեսանելիներուն եւ անտեսանելիներուն:

(կը հաւատանք) Եւ մէկ Տիրոջ Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին, ծնած Հայր Աստուծմէ՝ միածին, այսինքն՝ Հօրը էութենէն: Աստուած՝ Աստուծմէ, լոյս՝ լոյսէն, նշմարիտ Աստուած՝ նշմարիտ Աստուծմէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն Հօր (Աստուծոյ) բնութենէն, որով եղաւ ամէն բան երկնիքի մէջ եւ երկրի վրայ՝ երեսելիներն ու աներեսոյթները: Որ մեզի՝ մարդոցս համար եւ մեր փրկութեան համար երկնիքէն իջաւ,

մարմնացաւ, մարդացաւ, կատարելապէս ծնաւ Սուրբ կոյս Մարիամէն՝ Սուրբ Հոգիով: Որով առաւ մարմին, հոգի եւ միտք եւ ամէն ինչ որ կայ մարդուն մէջ՝ նշմարտապէս եւ ոչ թէ կարծիքով: Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երբորդ օրը յարութիւն առաւ եւ նոյն մարմինով երկինք ելաւ, նստաւ Հօրը աջ կողմը: Պիտի գայ նոյն մարմինով եւ Հօրը փառքով՝ դատելու ողջերը եւ մեռածները, որուն թագաւորութեան վախճան չկայ:

Կը հաւատանք նաեւ անեղ եւ կատարելապէս Սուրբ Հոգիին, որ խօսեցաւ Օրէնքին, Մարգարեներուն եւ Աւետարաններուն միջոցաւ. որ Յորդանան իջաւ, քարոզեց առաքելներուն բերնով եւ բնակեցաւ սուրբերուն մէջ:

Կը հաւատանք նաեւ միայն մէկ, ընդհանրական եւ առաքելական, սուրբ եկեղեցիին, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու քաւութեան ու թողութեան, մեռելներու յարութեան, հոգիներու եւ մարմիններու յաւիտեանական դատաստանին, երկինքի թագաւորութեան եւ յաւիտեանական կեանքին:

Գ. Դաս

Նիկիական Հանգանակին Բովանդակութիւնը

— Նիկիական հանգանակը քանի՞ կէտեր կը բովանդակէ:

— Տասը կէտեր որոնք են՝:

- ա) Հայրը,
- բ) Որդին,
- գ) Սուրբ Հոգին,
- դ) Եկեղեցին,
- ե) Մկրտութիւն,
- զ) Ապաշխարութեամբ մեղքերու թողութիւն,
- է) Մեռելոց յարութիւն,
- ը) Վերջին դատաստան,
- թ) Երկինքի թագաւորութիւն,
- ժ) Յաւիտեանական կեանք:

Հաւատամքին առաջին մասը Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդին դաւանութիւնն է. իսկ երկրորդ մասը դաւանութիւնն է Քրիստոսի եկեղեցւոյն եւ անոր միջոցաւ շարունակուող փրկագործութեան խորհուրդին ու երկինքի արքայութեան հաստատումին:

— Նիկիական հանգանակը չընդունող հաւաքականութիւններ կրնա՞ն ուղղափառ քրիստոնեաներ կոչուիլ:

— Ո՛չ, այն հաւաքականութիւնները, որոնք Նիկիական հանգանակին դաւանութիւնը չեն ընդունիր, չեն կրնար ուղղափառ քրիստոնեայ կոչուիլ: Անոնք մոլորեալ աղանդաւորներ են եւ դուրս կը մնան Քրիստոսի ընդհանրական եկեղեցիէն:

— Հայ եկեղեցւոյ մէջ, Ս. պատարագի արարողութեան ընթացքին ինչպէ՞ս կ'արտասանուի հաւատամքը:

— Սուրբ Աւետարանի ընթերցումէն վերջ, մինչ

դպիրներն ու ժողովուրդը գոհարանութեամբ «Փառք քեզ, Տէր Աստուած մեր» կ'երգեն, սարկաւազը կը դառնայ դէպի սուրբ սեղան եւ շղարշով բռնած իր սուրբ Աւետարանը հանդիսաւորապէս վեր կը բարձրացնէ ու քաղցր եղանակով բարձրաձայն կ'արտասանէ հաւատամքը: Այս միջոցին դպիրներն ու ժողովուրդը ոտքի կայնած, ձեռնամած դիրքով եւ մեղմ ձայնով կը հետեւին սարկաւազին ու կը դաւանին իրենց հաւատքը:

Ուստի իւրաքանչիւր հայ քրիստոնեայ պէտք է գոց սորվի Նիկիական հանգանակը՝ իր հաւատոյ դաւանութիւնը կարենալ արտասանելու համար եկեղեցւոյ մէջ եւ այլտր՝ հարկ եղած պարագաներուն:

Դ. Դաս

Ամենասուրբ Երրորդութիւն

— ԱՍՏՈՒԱՄ ինչպէ՞ս բանաձեւուած եւ նկարագրուած է հաւատամքին մէջ:

— Աստուած մէկ է: Ամենակալ (ամէն բան իր ձեռքին մէջ ունեցող, ամենակարող, ամէն բանի Տէր) հայր, որ ստեղծած է երկինքն ու երկիրը, տեսանելի եւ անտեսանելի բաները:

— Ինչպէ՞ս բանաձեւուած է ՈՐԴԻՆ:

— Որդին ծնած է Հօր Աստուծոյ հովիտէն: Անոր բնութենէն է, Լոյսէն լոյս է, Ճշմարիտ Աստուած է՝ Ճշմարիտ Աստուծմէ ծնած եւ ոչ թէ ստեղծուած: Մարդոց փրկութեան համար Ան երկինքէն իջնելով մարդացաւ, չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ: Նոյն մարմինով երկինք ելաւ եւ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ: Ան դարձեալ պիտի գայ դատելու ողջերն ու մեռելները:

— Ինչպէ՞ս բանաձեւուած է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ:

— Սուրբ Հոգին անեղ է (ստեղծուած չէ) եւ կատարեալ: Ան խօսեցաւ Օրէնքի եւ Մարգարէներու (Հին Կտակարանի գիրքերու) ու Աւետարանի (Նոր Կտակարանի) միջոցաւ: Յորդանան իջաւ, առաքեալներու միջոցաւ քարոզեց եւ սուրբերու մէջ բնակեցաւ:

— Ի՞նչ կը նշանակէ Երրորդութիւն:

— Երրորդութիւն կը նշանակէ երեք անձերէ կազմուած միութիւն:

— Ի՞նչ է Ամենասուրբ Երրորդութիւնը:

— Ամենասուրբ Աստուածութեան երեք անձերու անբաժանելի հովիտնն ու միութիւնն է: Այսինքն՝ Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Հոգի Սուրբ Աստուած,

երեքը միասին կը կոչուին ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒ-
ԹԻՒՆ: Ասոնք առանձին առանձին աստուածութիւն չեն,
այլ մէկ Աստուածութիւն՝ երեք անձերով:

— Ինչպէ՞ս կարելի է բանաձեւել Հօր, Որդւոյն եւ Ս,
Հոգւոյն միութիւնն ու միաստուածութիւնը:

— Հայր Աստուած անեղ է, անձին եւ անսկիզբ. ծնողն
է Որդւոյն եւ բղխողը Սուրբ Հոգւոյն:

Որդին ստեղծուած չէ, այլ ծնած է Հօր Աստուծմէ ի
յաւիտենից: Լոյս է լոյսէն, ճշմարիտ Աստուած է՝ ճշմա-
րիտ Աստուծմէ: Հակից եւ կերպարանակից է Հօր Աստու-
ծոյ:

Սուրբ Հոգին անեղ, անժամանակ եւ կատարեալ է.
Ծնունդ չէ, այլ կը բղխի Հօր Աստուծմէ. հակից է Հօր եւ
փառակից Որդւոյն:

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին համագոյակից են.
ունին մէկ բնութիւն, մէկ կամք, մէկ իշխանութիւն.
արարչակից են եւ հաւասար:

— Ինչպէ՞ս ըմբռնելու է «Հօր Աստուծմէ ծնած»
խօսքը:

— «Հօր Աստուծմէ ծնած» խօսքը պէտք չէ իմանալ
մարդ հակի ծնունդին նման, այլ պէտք է ըմբռնել Լոյսէն
ծագում առնող ճառագայթին պէս, որ իրեն ծնունդ տուող
լոյսին գոյակից է, այսինքն անբաժանելի է անկէ եւ նոյն
էութիւնն ու բնութիւնը ունի:

— Ամենասուրբ Երրորդութեան եւ
միաստուածութեան երեք անձերը միասնաբար ո՞ր
յայտնուեցան:

— Յորդանանի մէջ: Մինչ Որդին (Յիսուս) Յովհան-
նէս Մկրտիչին ձեռքով կը մկրտուէր, Հայր Աստուած եր-
կինքէն իր վկայութեամբ յայտնուեցաւ. իսկ Սուրբ Հոգին
աղանթի կերպարանքով իջաւ Որդւոյն վրայ ու օձեց զԱյն
(Մատթ. 9. 16):

— Առաջին անգամ ո՞վ բանաձեւեց եւ արտասանեց
երրորդութեան երեք անձերուն անունները:

— Մեր Տէրը Յիսուս Քրիստոս: Ան իր յարութենէն
ետք իր աշակերտներուն երեւնալով պատուիրեց որ երթան
աշխարհի ամէն կողմերը քարոզեն եւ դարձի եկողները
մկրտեն (լուան ու սրբեն) Հօր եւ Որդւոյն եւ Ս. Հոգւոյն
անունով. (Մատթ. ԻԸ. 18-20): Ուստի բոլոր
քրիստոնեաներ Ամենասուրբ Երրորդութիւնը կը զաւանին
ըսելով՝ «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
ամէն»:

— Ամենասուրբ Երրորդութիւնը չդաւանող մէկը
կրնա՞յ ուղղափառ Քրիստոնեայ կոչուիլ:

— Ո՛չ. ան որ Ամենասուրբ Երրորդութիւնը չի զաւա-
նիր, չի կրնար ուղղափառ Քրիստոնեայ կոչուիլ:

Ե. Դաս

Եկեղեցի

— Ի՞նչ կը նշանակէ ԵԿԵՂԵՑԻ:

— Եկեղեցի կը նշանակէ հաւատացեալներու կամ սուրբերու ժողով:

— Քրիստոնէական առումով որո՞նք կը կոչուին ՀԱՒԱՏԱՑԵԱԼ:

— Ամէն անոնք որոնք կը հաւատան Յիսուս Քրիստոսի փրկագործութեան եւ կը դաւանին Ամենասուրբ Երրորդութիւնը, կը կոչուին հաւատացեալ:

— Ո՞վ է հիմնադիրը եւ գլուխը Եկեղեցիին:

— Մեր Տէրը Յիսուս Քրիստոս Եկեղեցիին հիմնադիրն ու գլուխն է:

— Եկեղեցին որո՞ւ մարմինն է:

— Եկեղեցին Քրիստոսի մարմինն է. իսկ հաւատացեալները անոր մարմինն անդամներն են:

— Քրիստոսի Եկեղեցին քանի՞ նշաններ եւ ստորոգելիներ ունի:

— Քրիստոսի Եկեղեցին ունի չորս նշաններ կամ ստորոգելիներ. — Մի, Սուրբ, Ընդհանրական եւ Առաքելական:

ա) Մի. — Քրիստոսի Եկեղեցին մէկ է, քանի որ աշխարհի բոլոր Քրիստոնեայ հաւատացեալները կը հաւատան մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, կը դաւանին Սուրբ Երրորդութիւնը եւ կը կազմեն մէկ ամբողջութիւն, Քրիստոսով: Եկեղեցին իր հովուապետին՝ Յիսուս Քրիստոսի հետ մէկ հօտ եւ մէկ հովիւ է:

բ) Սուրբ. — Քրիստոսի Եկեղեցին սուրբ է, որովհետեւ սուրբ է իր հիմնադիրն ու գլուխը՝ որ իր արիւնովը զնած է զայն եւ սրբած մեղքէ:

գ) Ընդհանրական (կաթողիկէ). — Քրիստոսի Եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ ան մասնաւոր ազգի մը կամ ժողովուրդի մը սեփականութիւնը չէ, այլ բովանդակ մարդկութեան: Յիսուս Քրիստոսի փրկագործութեան Աւետարանը բոլոր ազգերու համար է: Աշխարհի մէջ տարբեր անուններով գոյութիւն ունեցող Եկեղեցիները մէկ ընդհանրական Եկեղեցիին ճիւղերն են՝ իրենց արմատ ունենալով Յիսուս Քրիստոսը:

դ) Առաքելական. — Քրիստոսի Եկեղեցին առաքելական է, որովհետեւ առաքեալներուն քարոզութեամբ հաստատուեցաւ եւ անոր նուիրապետութիւնը առաքեալներէն կու գայ՝ ձեռնադրութեամբ՝ փոխանցուելով իրենց յաջորդներուն:

— Եկեղեցին անսխալական է:

— Այո՛. Եկեղեցին անսխալական է, որովհետեւ Սուրբ Հոգին կ'առաջնորդէ զայն: Ս. Եկեղեցիին անսխալականութիւնը կը հիմնուի տիեզերական ժողովներու վրայ եւ ո՛չ թէ անհատ կաթողիկոսներու, պատրիարքներու կամ եպիսկոպոսներու վրայ:

— Եկեղեցին քանի՞ մասեր ունի ներկայիս:

— Եկեղեցին երկու մասեր ունի. — Զինուորեալ Եկեղեցի եւ Յաղթական Եկեղեցի: Այս աշխարհի վրայ ապրող հաւատացեալները կը կազմեն Զինուորեալ Եկեղեցին, որ կը պայքարի ընդդէմ սատանային ու մեղքին: Իսկ այս աշխարհի փորձութիւններուն յաղթելով հանդերձեալ կեանքին անցնող սուրբերը երկինքի մէջ կը կազմեն Յաղթական Եկեղեցին, որ կը կոչուի նաեւ Անդրանկաջ ժողով:

Աշխարհի բոլոր հաւատացեալները իրարու համար իրենց մատուցած աղօթքներով իրարու հաղորդակից կը դառնան: Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն այս երկու թեւերն ալ միշտ յարարելութեան մէջ են իրարու հետ: Մարտնչող Եկեղեցին Յաղթական Եկեղեցւոյ յիշատակը միշտ վառ կը պահէ ու կը հայցէ անոր անդամներուն աղօթքը իրեն համար: Իսկ Յաղթական Եկեղեցին Քրիստոսի միջոցաւ տեղ-

եակ կ'ըլլայ մարտնչող Եկեղեցւոյ կեանքին մասին ու կ'աղօթէ Տիրոջ որ երկրի վրայ ապրող հաւատացեալներուն ալ յաղթութիւն շնորհէ: Սուրբ Եկեղեցւոյ զոյգ թեւերուն ունեցած այս յարաբերութիւնը կը կոչուի հաղորդութիւն սրբոց:

— Ի՞նչ է Եկեղեցիին պաշտօնը այս աշխարհի վրայ:

— Եկեղեցիին պաշտօնն է՝ Յիսուս Քրիստոսի փրկագործութեան աւետարանը (բարի լուրը) տարածել աշխարհի ամէն կողմերը եւ հրաւիրել համայն մարդկութիւնը՝ Երկինքի արքայութիւնը ժառանգելու: Նաեւ Եկեղեցւոյ պարտականութիւնն է դաստիարակել իր զաւակները Քրիստոնէական հաւատքով:

— Ի՞նչ կը նշանակէ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ:

— Հայաստանեայց Եկեղեցի կը նշանակէ՝ հայաստանցիներու կամ հայ հաւատացեալներու ժողովք, որ կը կոչուի նաեւ Հայոց Եկեղեցի կամ Հայ Եկեղեցի:

— Որո՞նք էին Եկեղեցիին Հայաստանեայց Եկեղեցիին:

— Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաքեալները հիմնեցին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ եղան անոր առաջին լուսաւորիչները:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայրապետին քարոզութեամբ ալ Հայաստան աշխարհը ամբողջութեամբ Քրիստոնեայ դարձաւ եւ Քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակուեցաւ: Հետեւաբար Ս. Գրիգոր եղաւ մեր երկրորդ Լուսաւորիչը:

— Ինչո՞ւ համար մայրեանի Եկեղեցի կ'ըսենք մեր Եկեղեցիին:

— Որովհետեւ ան հոգեւոր մայր եղած է իր ժողովուրդին եւ իր զաւակները սնուցած է Ս. Աւետարանի անխարդախ կաթով (Աստուծոյ խօսքով)․ նաեւ իր թեւարկութեան տակ պահած է ու կը պահէ զանոնք ընդդէմ հայ հաւատքի թշնամիներուն:

2. Դաս

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն խորհուրդները

— Ի՞նչ կը նշանակէ խորհուրդ, կրօնական առումով:

— Խորհուրդ կը նշանակէ մարմնական աչքերով անտեսանելի, միտքով անըմբռնելի, եւ միայն հոգեւոր աչքերով տեսանելի եւ հաւատքով ըմբռնելի իրականութիւն: Օրինակ՝ մկրտուողին Աստուծոյ Որդեգիր դառնալը, ապաշխարողին մեղքէ արձակումը, Ս. Պատարագի ընթացքին օրհնուած հացին ու գինիին Յիսուսի մարմնոյն եւ արեան գոյափոխումը չենք կրնար տեսնել մեր մարմնական աչքերով, սակայն կ'ըմբռնենք հաւատքով:

— Քրիստոսի սուրբ Եկեղեցիին քանի՞ խորհուրդներ ունի:

— Քրիստոսի սուրբ Եկեղեցիին ունի եօթը խորհուրդներ, որոնք են՝

- 1) Մկրտութիւն,
- 2) Դրոշմ,
- 3) Ապաշխարութիւն,
- 4) Հաղորդութիւն,
- 5) Պսակ կամ ամուսնութիւն,
- 6) Զեռնազրութիւն,
- 7) Կարգ հիւանդաց կամ վերջին օծում:

— Ո՞վ հաստատած է Եկեղեցւոյ Եօթը խորհուրդները:

— Մեր Տէրը Յիսուս Քրիստոս:

— Եօթը խորհուրդները ինչո՞ւ համար հաստատած են:

— Եօթը խորհուրդները հաստատուած են, որպէսզի սուրբ Եկեղեցիին անոնց միջոցաւ շարունակէ Յիսուս Քրիստոսի փրկագործութիւնը եւ բաշխէ աստուածային պէս պէս շնորհները հաւատացեալներուն: Եօթը խոր-

Հուրդները Ս. Եկեղեցւոյ Հոգեւոր շէնքին եօթը սիւններն են, որոնք հաւատացեալները Հոգեւոր կեանքի բարձրութեան վրայ ամուր եւ անսասան կը պահեն:

— Խորհուրդներու միջոցաւ աստուածային շնորհներու արժանանալու համար ի՞նչ կը պահանջուի հաւատացեալներէն:

— Հաւատք, երկիւղածութիւն, Հոգեկան պատրաստութիւն եւ աղօթք:

— Ամէն խորհուրդ ի՞նչ ունի:

— Ամէն խորհուրդ ունի իր աստուածային հաստատութիւնը, Սուրբ Հոգիի շնորհքին պարգեւը, արարողութիւնն ու զգալի նշանը:

— Խորհուրդները օրինաւորապէս կատարելու պայմանները ի՞նչ են:

— Խորհուրդները օրինաւորապէս կատարելու համար անհրաժեշտ են՝

ա) Խորհրդակատար ձեռնադրեալ պաշտօնեայ՝ քահանայ կամ եպիսկոպոս:

բ) Խորհուրդին արտաքին կամ զգալի նշանը: Օրինակ՝ մկրտութեան ատեն՝ ջուրը եւ Ս. միւռոնը: Ս. հաղորդութեան ատեն՝ սրբազործուած հացն ու գինին:

գ) Խորհուրդին յատուկ բանաձեւն ու աղօթքը, որոնք կը սրբազործեն ենթական: Օրինակ՝ մկրտութեան ատեն անհրաժեշտ է արտասանել՝ «մկրտի ծառայս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Է. Դաս

Մկրտութիւն

— Ի՞նչ կը նշանակէ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ:

— Մկրտութիւն կը նշանակէ՝ լուացում, մաքրութիւն:

— Ինչո՞ւ համար հաստատուած է Մկրտութեան խորհուրդը:

— Մարդ արարածին Սկզբնական կամ Ադամական մեղքը սրբելու համար: (Եթէ ենթական չափահաս է, մկրտութեան խորհուրդը կը սրբէ նաեւ անոր զործած բոլոր մեղքերը):

— Ի՞նչ է Սկզբնական կամ Ադամական մեղքը:

— Մեր նախածնողաց՝ Ադամի եւ Եւայի անհնազանդութեան յանցանքը կը կոչուի Սկզբնական կամ Ադամական մեղք որուն պատճառով անոնք կորսնցուցին իրենց սրբութիւնն ու դրախտային երանութիւնը: Անոնց այս մեղքը ժառանգաբար փոխանցուեցաւ իրենց սերունդին:

— Ինչո՞ւ համար մկրտութիւնը կը կոչուի ՎԵՐՄՍԻՆ ՄՆՈՒՆԴ:

— Որովհետեւ մկրտողը իր մեղքերէն սրբուելով կը դառնայ Աստուծոյ որդեգիր, Եկեղեցւոյ անդամ, Երկինքի արքայութեան ժառանգորդ եւ կը սկսի նոր կեանքի մը:

— Մկրտութեան զգալի նշանը ի՞նչ է:

— Մկրտութեան զգալի նշանը ջուրն է, որ նշանակ է մաքրութեան եւ սրբութեան: Մկրտութեան ջուրը կը խորհրդանշէ Աստուծոյ խօսքը, որուն աղբիւրն է Սուրբ Հոգին: Աստուածաշունչին մէջ Աստուծոյ խօսքը յաճախ կոչուած է կենդանի ջուր, կենաց ջուր:

- Մկրտութեան թեկնածու անձը ի՞նչ կը կոչուի:
- Մկրտութեան թեկնածու անձը կը կոչուի երախայ:
- Որո՞ւ անունով կը մկրտուի երախան:
- Սուրբ Երրորդութեան անունով:
- Մկրտութեան եկող թեկնածուէն ի՞նչ կը պահանջուի:

— Հաւատք առ Սուրբ Երրորդութիւն:

— Եկեղեցին ինչո՞ւ համար կը մկրտէ անչափառաւ մանուկները, որոնք Ս. Երրորդութիւնը դաւանելու գիտակցութիւնը չունին:

— Եկեղեցին անչափահաս մանուկները կը մկրտէ անոնց ծնողքին եւ կնքահօր հաւատքին վրայ: Յիսուսի պատուէրն է որ ամէն ոք (մեծ թէ պատիկ) ջուրէն ու հողիէն ծնի, այսինքն՝ մկրտուի (Յովհ. Գ. 3-8): Աստուածաշունչէն կ'իմանանք թէ առաքելներու ժամանակ ոմանք մկրտուած են հանդերձ ընտանեօք:

— Ի՞նչ են ծնողաց եւ կնքաւոր պարտականութիւններն ու պատասխանատուութիւնները իրենց զաւկին ու սանին հանդէպ:

— Մնողք կնքահօր միջոցաւ երախան կը ներկայացընեն քահանային եւ կը խնդրեն որ զայն մկրտէ: Մկրտութենէն վերջ Աստուծոյ առջեւ պարտական են զայն դաստիարակելու Քրիստոնէական հաւատքով, որպէսզի ան դառնայ առաքինի հաւատացեալ մը: Կնքահօր պարտականութիւնն է՝ հսկել իր սանին վրայ ու անպակաս ընել իր խրատներն ու ցուցմունքները, որպէսզի ան չչեղի ու չկորսընցնէ իր որդեգրութիւնը:

— Քանի՞ ձեւերով կրնայ կատարուիլ մկրտութիւնը:

— Մկրտութիւնը կրնայ կատարուիլ երեք ձեւերով. —

ա) Հեղմամբ՝ Մկրտուողին վրայ ջուր թափելով,

բ) Ընկղմամբ կամ թաղմամբ՝ մկրտուողը ջուրին մէջ թաղելով,

գ) Սրսկմամբ՝ մկրտուողին վրայ ջուր սրսկելով:

Հայ Եկեղեցին որդեգրած է ընկղմամբ կամ թաղմամբ

ձեւը: Քահանան երախան երեք անգամ կ'ընկղմէ ջուրին մէջ ըսելով՝ «Այս անուն... Աստուծոյ ծառան (կամ աղախինը) երախայութենէ մկրտութեան գալով՝ կը մկրտուի Հօր, Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն անունով, քրիստոսի արիւնով դնուած ըլլալով մեղքի ծառայութենէն կ'ընդունի երկնաւոր Հօր որդեգրութիւնը, կը դառնայ Քրիստոսի ծառանգակից եւ Սուրբ Հոգւոյն տաճար»:

— Մկրտութիւնը կրնա՞յ կրկնուիլ:

— Ո՛չ. մկրտութիւնը միայն մէկ անգամ կը կատարուի: Կրկնամկրտութիւնը սխալ է եւ Աստուծոյ խօսքին դէմ՝ մեղանշում:

Դրոշմ

- Ի՞նչ կը նշանակէ ԴՐՈՇՄ:
- Դրոշմ կը նշանակէ կնիք: Կրօնական առումով դրոշմը Սուրբ Հոգւոյն կնիքն է եւ առ այդ դրոշմի խորհուրդը կը կոչուի կնուեմ, որովհետեւ մկրտուածին ճակատը եւ մարմնոյն այլ մասերը Ս. միւռոնով կը կնքուին:
- Ինչո՞ւ համար դրոշմը խորհուրդ է:
- Որովհետեւ ենթական դրոշմի խորհուրդով կը ստանայ Սուրբ Հոգւոյն շնորհքը:
- Ի՞նչ կը նշանակէ ՇՆՈՐՀՔ:
- Շնորհք կը նշանակէ՝ պարգեւ: Երբ կ'ըսենք Աստուծոյ շնորհքը, ըսել կ'ուզենք Աստուծոյ տուած նուէրը կամ պարգեւը: Հետեւաբար դրոշմի խորհուրդով ենթական կը ստանայ Աստուծոյ զօրութիւնն ու իմաստութիւնը՝ Քրիստոնէական հաւատքի մէջ ամուր մնալու եւ Սուրբ Երրորդութիւնը համարձակօրէն դաւանելու համար:
- Ո՞վ հաստատեց դրոշմի խորհուրդը:
- Յիսուս Քրիստոս հաստատեց զայն: Մեր Տէրը Յորդանան գետին մէջ մկրտուելէ ետք ստացաւ Սուրբ Հոգւոյն օծումն ու կնիքը եւ Յովհաննէս Մկրտիչ զԱյն հռչակեց Աստուծոյ օծեալը, այսինքն՝ Քրիստոս, Մեսիա՛:
- Դրոշմի խորհուրդը ստացողները ի՞նչ կը կոչուին:
- Դրոշմի խորհուրդը ստացողները կը կոչուին Աստուծոյ օծեալներ եւ կնիքուածներ: Մկրտութեամբ սրբաւածներն ու դրոշմով օծեալները Աստուծոյ փրկեալ զաւակներն են եւ ժառանգորդ երկինքի արքայութեան՝ պայմանաւ որ հաւատարմօրէն ապրին քրիստոնէական կեանք մը:

- Դրոշմի խորհուրդին զգալի նշանը ի՞նչ է:
- Դրոշմի խորհուրդին զգալի նշանը Ս. միւռոնն է, որ կը խորհուրդանշէ Սուրբ Հոգին:
- Ի՞նչ կը նշանակէ ՄԻՒՌՈՆ:
- Միւռոն կը նշանակէ՝ անոյշ իւղ: Իսկ կրօնական առումով կը նշանակէ սուրբ իւղ որ օրհնուած է աղօթքով ու մասնաւոր արարողութեամբ: Հայ Եկեղեցին միւռոնօրհնէքի արարողութեան կատարումը վերապահած է կաթողիկոսին, որ կը կատարէ զայն մեծ հանդիսութեամբ՝ եպիսկոպոսական դասին հետ միասին:
- Ի՞նչ տեսակ նիւթերէ կը բաղկանայ սուրբ միւռոնը:
- Սուրբ միւռոնը ձիթենիի եւ դափնիի մաքուր ձէթն է, որուն մէջ կը խառնուին քառասունէ աւելի անուշահոտ նիւթեր, որոնց գլխաւորն է բալասանը:
- Առաքեալներ կը կատարէին դրոշմի խորհուրդը:
- Այո: Գործք Առաքելոցի մէջ կը կարդանք թէ Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներ Սամարիա գացին եւ նորադարձ մկրտեալներուն վրայ ձեռք դնելով աղօթեցին, որպէսզի անոնք ստանան Սուրբ Հոգին (Գործք Ը. 14-17): Պօղոս առաքեալն ալ Եփեսոսի մէջ ձեռք դրաւ մկրտուող հաւատացեալներուն վրայ եւ անոնց վրայ իջաւ Սուրբ Հոգին (Գործք ԺԹ. 5-7):
- Հայ Եկեղեցին ե՞րբ կը կատարէ դրոշմի խորհուրդը կամ կնուեմը:
- Հայ Եկեղեցին դրոշմի խորհուրդը կը կատարէ մկրտութենէն անմիջապէս յետոյ: Այս երկու խորհուրդներուն՝ մկրտութեան եւ կնուեքին միատեղ կատարումը պատճառ դարձած է որ մեր ժողովուրդը այս երկու խորհուրդները միասնաբար կոչէ կնուեմ:
- Հայ Եկեղեցին ինչպէ՞ս կը կատարէ դրոշմի խորհուրդը:
- Քահանան Յիսուս Քրիստոսի անունով միւռոնով կ'օծէ ու կը կնքէ մկրտեալի մարմինին ինը մասերը. —

ձակասը, աչքերը, ականջները, հատտեփիքը, բերանը, ձեռքերը, սիրտը, կոնակը, եւ ոտքերը:

— Դրոշմի խորհուրդը կատարելէ վերջ քահանան ի՞նչ կ'ըսէ դրոշմեալին:

— «*Խաղաղութի՛ւն քեզի, ո՛վ Աստուծոյ փրկեալ, խաղաղութի՛ւն քեզի, ո՛վ Աստուծոյ օծեալ*»:

— Դրոշմի խորհուրդը կրնա՞յ կրկնուիլ:

— Ո՛չ, դրոշմի խորհուրդն ալ մկրտութեան պէս անկրկնելի է:

Թ. Դաս

Ապաշխարութիւն

— Ի՞նչ կը նշանակէ ապաշխարել:

— *Ապաշխարել կը նշանակէ զղջումով լալ կատարուած մեղքի մը համար, խոստովանիլ զայն եւ Աստուծմէ թողութիւն խնդրել:*

— Ի՞նչ կը նշանակէ մեղք:

— *Մեղք կը նշանակէ կրօնական, բարոյական յանցանք, օրինակ ճշմարտութեան դէմ հակառակութիւն, Աստուծոյ անհնազանդութիւն:*

— Ի՞նչ է մեղքին հետեւանքը եւ վարձքը:

— *Մեղքին հետեւանքը ապականութիւն է, հեռացում Աստուծմէ, որով մարդը կը կորսնցնէ աստուածային շքանորհներն ու իր որդեգրութիւնը եւ կը դատապարտուի (մահէն ետք) յաւիտենական տանջանքի: Բայց երբ խոստովանի իր մեղքերը ու ապաշխարէ, թողութեան կ'արժանանայ:*

— Պայմա՞ն է որ բոլոր մարդիկ ապաշխարեն:

— *Այո, քանի որ բոլոր մարդիկ կամայ թէ ակամայ ենթակայ են մեղանշելու: Ուստի ամէնքն ալ պէտք է դարձի զան, զղջան, խոստովանին ու ապաշխարեն, որպէսզի սրբուին իրենց մեղքերէն:*

— Ինչո՞ւ համար խորհուրդ է ապաշխարութիւնը:

— *Որովհետեւ ապաշխարողը իր մեղքերուն համար թողութիւն կը ստանայ, կը նորոգուի, կը վերականգնի, ներքին փոփոխութիւն եւ հոգեկան խաղաղութիւն կ'ունենայ:*

— Ի՞նչ կը նշանակէ խոստովանութիւն:

— Խոստովանութիւն կը նշանակէ՝ գործուած մեղքի, յանցանքի եւ կամ սխալ արարքի յայտարարութիւն եւ զղջումի արտայայտութիւն:

— Որո՞ւ պէտք է խոստովանիմք մեր մեղքերը:

— Աստուծոյ պէտք է խոստովանինք եւ թողութիւն խնդրենք:

— Ինչո՞ւ համար քահանային առջեւ կը խոստովանիմք մեր մեղքերը եւ արձակում կը խնդրենք:

— Որովհետեւ քահանան Աստուծոյ ձեռնադրեալ եւ օծեալ պաշտօնեան ըլլալով իշխանութիւն ունի ապաշխարողները իրենց մեղքերէն արձակելու:

— Ո՞վ տուած է այդ իշխանութիւնը քահանային:

— Մեր Տէրը Յիսուս Քրիստոս իր առաքեալներուն իշխանութիւն տուաւ մարդոց մեղքերը կապելու եւ արձակելու: Առաքեալներն ալ իրենց ստացած իշխանութիւնը ձեռնադրութեամբ փոխանցեցին իրենց յաջորդող եպիսկոպոսներուն եւ երէցներուն:

— Ուրեմն խոստովանութեան արարողութիւնը ապաշխարութեան խորհուրդի կատարումն է:

— Այո՛, պայմանաւ որ խոստովանողը իր մեղքերուն անդրադարձած ըլլալով սրտանց զղջայ եւ թողութիւն խնդրէ ու որոշում տայ որ յետ այնորիկ պիտի զգուշանայ մեղանշելէ:

— Խոստովանութեան արարողութիւնը ինչպէ՞ս կը կատարուի Հայ Եկեղեցւոյ մէջ:

— Հայ Եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս խոստովանութիւնը կը կատարուի հաւաքական կերպով: Ապաշխարութեան եւ խոստովանութեան եկողներէն մէկը կը կարգայ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զղջումի աղօթքը՝ որմէ ետք քահանան «Ողորմեսցի Զեզ մարգասէրն Աստուած» աղօթքը արտասանելով՝ Աստուծոյ անունով մեղքէ կ'արձակէ խոստովանողները:

Հաւաքական խոստովանութենէն զատ, անհրաժեշտ պարագաներու, ապաշխարողներ՝ կրնան առանձին ներ-

կայանալ քահանային եւ խոստովանիլ իրենց մեղքերը եւ բարի խորհուրդներ ստանալ:*

— Ապաշխարողը վերստին չմեղանշելու համար ի՞նչ միջոցներ գործածելու է:

— Անդազար աղօթքը, Աստուածաշունչի սերտողութիւնն ու յաճախակի ծումապահութիւնը գործնական միջոցներ են փորձութիւններու յաղթելու եւ չմեղանշելու համար: Ամէն կիրակի եկեղեցի յաճախելով, հոգեշունչ քարոզներ մտիկ ընելով եւ Ս. Պատարագի արարողութեան երկիւղածութեամբ հետեւելով հաւատացեալը կը զօրանայ հոգեպէս: Իսկ առաւել եւս զօրանալու համար պէտք է յաճախ հաղորդուիլ՝ ճաշակելով Քրիստոսի կենդանարար մարմինն ու արիւնը:

— Ապաշխարութիւնը կրնա՞յ կրկնուիլ

— Այո՛, նկատելով որ մարդ արարածը մեղանշական է, եւ յաճախ կամայ թէ ակամայ յանցանքներ կը գործէ, պարտաւոր է միշտ խոստովանիլ իր մեղքերը եւ թողութիւն խնդրել Աստուծմէ:

*) Հին ատեն երբ ապաշխարողը իր մեղքերը խոստովանէր, քահանան անոր մեղքերուն ծանրութեան համեմատ ապաշխարանքի օրեր, շաբաթներ, ամիսներ եւ ծանրակշիռ պարագաներուն ալ տարիներ կը սահմանէր, որպէսզի ենթական այդ ժամանակաշրջանը անցընէր գոյամի աղօթքներով, բարեգործութեամբ եւ առաքինի վարքով: Ապաշխարութեան ժամանակաշրջանի վերջաւորութեան խոստովանողը կը մերկայանար քահանային եւ կը ստանար արձակում իր մեղքերուն համար: Այժմ այս ձեւը բացառիկ եւ շատ ծանր լանցանքի մը պարագային միայն կը գործածուի:

Ժ. Դաս

Հաղորդութիւն

- Ի՞նչ կը նշանակէ հաղորդութիւն:
- Հաղորդութիւն կը նշանակէ՝ հաղորդակցութիւն, մասնակցութիւն, միացում:
- Ի՞նչ է Ս. հաղորդութիւնը:
- Ս. հաղորդութիւնը Ս. Պատարագի արարողութեան ընթացքին սրբազործուած հացն ու գինին են, որոնք Սուրբ Հոգւոյն գորութեամբ կը գոյափոխուին Յիսուս Քրիստոսի մարմինին եւ արեան:
- Ինչո՞ւ համար հաղորդութիւն կը կոչուին սրբազործուած հացն ու գինին:
- Որովհետեւ սրբազործուած հացին եւ գինին ճաշակումով հաւատացեալները կը հաղորդուին, կը յարաբերին ու կը միանան իրենց Փրկչին հետ: Յիսուս ներկայ է գոյափոխուած հացին եւ գինին մէջ որ ճշմարտապէս իր մարմինն ու արիւնն են: Հետեւաբար ով որ ճաշակէ եւ ըմպէ Յիսուսի մարմինն ու արիւնը, Յիսուս Քրիստոսը ընդունած կ'ըլլայ իր ներսիդին:
- Որո՞նք են սուրբ հաղորդութեան զգալի նշանները:
- Ս. հաղորդութեան զգալի նշաններն են բաղարջ (անխմոր) հացն ու անապակ գինին, որոնք պատարագիչ քահանային աղօթքովը սրբազործուելով՝ կը փոխարկուին Քրիստոսի մարմինին եւ արեան, առանց փոխելու իրենց նիւթական գոյացութիւնը, այսինքն ձեւն ու համբ:
- Ինչո՞ւ համար խորհուրդ է Ս. հաղորդութիւնը:
- Որովհետեւ Ս. Պատարագի ընթացքին կատարուող գոյափոխութիւնը եւ հաղորդուող հաւատացեալին Քրիստոսի հետ միացումը մեր մարմնական աչքերով չենք կրնար տեսնել, այլ կ'ըմբռնենք հաւատքով ու հոգիի աչքերով միայն:

- Ո՞վ հաստատեց Ս. հաղորդութեան խորհուրդը:
- Սեր Տէրը Յիսուս Քրիստոս հաստատեց Ս. հաղորդութեան խորհուրդը վերնատան մէջ, երբ վերջին ընթրիքը կը կատարէր իր աշակերտներուն հետ:
- Ընթրիքի ատեն Յիսուս հացը առնելով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ:
- Յիսուս հացը առաւ, օրհնեց, կտրեց եւ իր աշակերտներուն տալով ըսաւ, «Առէք, կերէք, այս է իմ մարմինս, որ կը բաշխուի ձեր եւ շատերու համար, որպէս մեղքերու քաւութիւն եւ թողութիւն»:
- Յիսուս գինիին բաժակը առնելով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ:
- Յիսուս գինիին բաժակը առնելով գոհացաւ եւ աշակերտներուն տալով ըսաւ, «Բոլորդ խմեցէք ասկէ, այս է իմ նոր ուխտի արիւնս որ կը թափուի ձեր եւ շատերու համար որպէս քաւութիւն եւ թողութիւն մեղքերու»:
- Յիսուս այս խօսքերը արտասանելէ ետք պատուիրեց իր աշակերտներուն որ Ս. հաղորդութեան խորհուրդը ընդմիշտ կատարեն գինք յիշելու համար:
- Հաղորդութիւնը պայման է յաւիտեանական կեանքը ժառանգելու համար:
- Այո՛. որովհետեւ Յիսուս ըսաւ, «Եթէ Որդւոյ Մարդոյ մարմինը չուտէք եւ անոր արիւնը չխմէք՝ ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար»:
- Ինչպէ՞ս մօտեցալու է Ս. հաղորդութեան:
- Մաքուր խղճմտանքով, խոստովանութեամբ, երկիւղածութեամբ եւ զգուշութեամբ: Վայելուչ հագուստով (կիներ իրենց գլուխները ծածկած): Ով որ անարժանաբար ճաշակէ Յիսուսի մարմինն ու արիւնը, իր մեղքերուն վրայ աւելի ծանր մեղք կ'աւելցնէ եւ կը պատժուի:
- Ի՞նչ ներգործութիւն եւ օգտակարութիւն ունի Ս. հաղորդութեան մաշակումը հաւատացեալին:
- Ս. հաղորդութեան ճաշակումով հաւատացեալը Քրիստոսի ներկայութիւնը կ'ընդունի իր ներսիդին եւ կը սրբուի ու կը մաքրուի իր մեղքերէն, Ս. Հոգւոյն շնորհ-

ներով կը զօրանայ սատանային ու մեղքին յաղթելու համար եւ արժանաւոր թեկնածու կը դառնայ Երկինքի արքայութեան:

— Ինչո՞ւ համար Սրբութիւն կը կոչուի հաղորդութիւնը:

— Որովհետեւ Յիսուս Քրիստոսի մարմինն է, եւ Յիսուս Քրիստոսի մարմինը սուրբ է:

— Հաւատացեալ մը տարին քանի՞ անգամ հաղորդուելու է:

— Հաւատացեալ մը յաճախ հաղորդուելու է, նամանաւանդ տօնական օրերուն: Հայ Քրիստոնեայ հաւատացեալը տարին նուազագոյնը հինգ տաղաւարներուն (Ս. ծնունդի, Ս. Զատիկի, Այլակերպութեան (Վարդավառի), Ս. Աստուածածնի վերափոխման եւ Խաչվերացի տօներուն) հաղորդուելու է: Ոեւէ քրիստոնեայ գոնէ տարին մէկ անգամ անպայման պէտք է հաղորդուի: Ով որ չի հաղորդուիր Քրիստոսի մարմնով եւ արեամբ օտար կը մնայ Քրիստոսի եւ զուրս՝ Քրիստոսի հօտէն եւ ժառանգութենէն:

ԺԱ. Դաս

Ս. Հաղորդութեան Խորհուրդին Արարողութիւնը (Սուրբ Պատարագ)

— Ի՞նչ կը նշանակէ ՊԱՏԱՐԱԳ:

— Պատարագ կը նշանակէ՝ գոհ, նուէր, ընծայ:

— Ի՞նչ կը նշանակէ ՌԻՒՏ եւ Ի՞նչ է ՀԻՆ ՌԻՒՏԸ

— Ուխտ կը նշանակէ՝ հանդիսաւոր դաշինք կամ խոստում որ կը կատարուի երկու կամ աւելի անձերու միջեւ:

Հին Ուխտը Աստուծոյ եւ իսրայէլի ազգին միջեւ կատարուած հանդիսաւոր դաշինք մըն էր: Աստուած ուխտած եւ խոստացած էր օրհնել իսրայէլի ազգը եւ զայն միջոց դարձնել համայն աշխարհի մարդոց մեղքերու քաւութեան համար, իր կատարելիք փրկազորութեան իրագործմամբ: Իսկ իսրայէլի ազգն ալ պաշտօնապէս խոստացած էր հաւատարմութիւն ցոյց տալ Աստուծոյ եւ կատարել Անոր կողմէ իրեն յանձնուած օրէնքները, կանոններն ու պատուիրանները:

— Հիմ Ուխտի շրջանին մարդիկ պատարագը ինչպէ՞ս կը մատուցանէին:

— Կենդանիներ կը մորթէին, անոնց արիւնը թափելէ ետք զանոնք զոհասեղանի վրայ կը դնէին ու այրելով Աստուծոյ կը նուիրէին՝ իրենց մեղքերուն քաւութեան համար: Նաեւ կը մատուցանէին անուշահոտ խունկի, հացի, գինիի, ձէթի ու երկրի բերքէն զանազան ընծաներ:

Հին Ուխտի պատարագներու ընթացքին թափուող արիւնները ստուերն էին նոր Ուխտի միջնորդ Քրիստոսի արեան հեղումին:

— Ի՞նչ է Նոր Ուխտը:

— Նոր Ուխտը Աստուծոյ դաշինքն է համայն աշխարհի մարդոց հետ: Այս Նոր Ուխտին միջնորդը եղաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ խաչին վրայ իր սուրբ արիւնը թափելով զոհուեցաւ ու նուիրուեցաւ Հօր Աստուծոյ՝ մեր մեղքերուն քաւութեան համար: Հայր Աստուած ընդունեց իր Միածին Որդւոյն պատարագումն ու բարեխօսութիւնը եւ բացաւ դրախտին դուռը բոլոր մարդոց առջեւ որ փակուած էր Ադամին անհնազանդութեան եւ մեղքին պատճառով:

Նոր Ուխտին հաստատումով խափանուեցաւ Հին Ուխտը եւ դադրեցաւ կենդանիներու զոհաբերութիւնները:

— Ներկայիս Ս. Եկեղեցւոյ մէջ մատուցուող պատարագը ի՞նչ է:

— Ս. Եկեղեցւոյ մէջ մատուցուող պատարագը Ս. Հաղորդութեան խորհուրդի արարողութիւնն է, որ հաստատուած է Յիսուս Քրիստոսի կողմէ Վերնատան մէջ՝ վերջին ընթրիքի ընթացքին: Այս արարողութիւնը կը կոչուի անարին պատարագ, որ յիշատակութիւնն ու շարունակութիւնն է Գողգոթայի խաչին վրայ, Յիսուսի պատարագումին ու զոհաբերումին: Այս արարողութեան ընթացքին կարդացուող աղօթքներուն, քարոզներուն, Ս. գրային ընթերցումներուն եւ երգերուն միջոցաւ կը պատմուի Քրիստոսի մարդեղութիւնը, խաչելութիւնը, քաւարար մահը, հրաշալի յարութիւնը, մշտնջենական բարեխօսութիւնը եւ երկրորդ գալուստը:

— Ինչո՞ւ համար Ս. հաղորդութեան խորհուրդի արարողութիւնը պատարագ, զոհ կամ ընծայ կը կոչուի:

— Որովհետեւ Ս. Հաղորդութեան խորհուրդի ընթացքին օրհնուած հացն ու գինին իբրեւ Քրիստոսի մարմինն ու արիւնը հաւատացեալներուն կողմէ պատարագիչ քահանային ձեռամբ՝ կ'ընծայուին Հօր Աստուծոյ՝ իրենց մեղքերուն քաւութեան համար:

Յիսուս Քրիստոս հացի եւ գինիի ձեւին տակ Հօր Աս-

տուծոյ ընծայուելով՝ զոհաբերուելով կը հաճեցնէ զԱյն թողութիւն շնորհելու իր զաւակներուն՝ հաւատացեալ ժողովուրդին, եւ որպէս կենդանի հաց բաշխուելով կը բնակի զինք ճաշակողներու ներսիդին եւ կը սրբէ զանոնք:

— Որո՞նք կրնան պատարագ մատուցանել:

— Քահանայական պաշտօն ունեցող եկեղեցականներ:

— Ս. Պատարագը ինչպէ՞ս կը մատուցուի հայ Եկեղեցւոյ մէջ:

— Սուրբ պատարագը մեծ Հանդիսութեամբ կը մատուցուի հայ եկեղեցւոյ մէջ: Սաղմոսներ, աղօթքներ, հոգեգմայլ երգեր, ջահավառութիւն, խնկարկութիւն պատշաճ ու վայելուչ զգեստաւորում մաս կը կազմեն Ս. պատարագի արարողութեան:

— Ի՞նչ է քահանային դերը Ս. պատարագի արարողութեան մէջ:

— Քահանան խորհրդակատարն է: Ան Աստուծոյ սուրբ սեղանին առջեւ կ'աղօթէ իր եւ իր ժողովուրդին մեղքերուն քաւութեան համար: Նոյն ատեն որպէս Քրիստոսի փոխանորդ կ'արտասանէ Անոր խօսքերը եւ կը բաշխէ Անոր մարմինն ու արիւնը հաւատացեալներուն:

— Ի՞նչ է սարկաւագին պաշտօնը:

— Սարկաւագը սպասաւորն է սուրբ պատարագի սեղանին: Իր պարտականութիւններն են՝ խնկարկել, Աւետարան կարդալ, Ս. Հաղորդութեան վերաբերումը կատարել եւ ժողովուրդը առաջնորդել երկիւղածութեան եւ աղօթքի:

— Ի՞նչ է դպիրներուն պաշտօնը:

— Դպիրներուն պաշտօնն է՝ սուրբ պատարագի երգեցողութիւնը կատարել:

— Ժողովուրդին պարտականութիւնը ի՞նչ է:

— Ժողովուրդին պարտականութիւնն է՝ ուշադրութեամբ հետեւիլ արարողութեան, մեղմօրէն ձայնակցիլ դպիրներու երգեցողութեան, աղօթել Աստուծոյ: Իսկ

սուրբ հաղորդութեան մօտենայ հաւատքով եւ երկիւղածութեամբ:

Հաւատացեալին պարտականութիւնն է նաեւ իր նիւթական մասնակցութիւնը բերել՝ եկեղեցւոյ պնակին մէջ դնելով սրտաբուխ նուէր մը՝ իր կարողութեան համեմատ:

ԺԲ. Դաս

Ս. Պսակ կամ Ամուսնութիւն

— Ի՞նչ է ամուսնութիւնը:

— Ամուսնութիւնը այր եւ կնոջ միութիւնն է Աստուծոյ օրհնութեամբ:

— Ո՞վ հաստատեց ամուսնութեան խորհուրդը:

— Աստուած Ադամը ստեղծելէ ետք, անոր համար ստեղծեց Եւան եւ երկուքը օրհնելով ու միացնելով հաստատեց ամուսնութեան խորհուրդը:

— Ի՞նչ է Ս. պսակի արարողութիւնը:

— Սուրբ պսակի արարողութիւնը սիրոյ եւ հաւատարմութեան ուխտադրութիւնն է ամուսնացող զոյգին՝ Աստուծոյ ու հանրութեան առջեւ: Այրը կը խոստանայ մինչեւ մահ տէր ու պաշտպան ըլլալ իր կնոջ ու չլքել զայն: Կինը կը խոստանայ հնազանդիլ իր ամուսինին եւ օգնական ըլլալ անոր մինչեւ մահ:

— Ինչո՞ւ համար ամուսնութեան արարողութիւնը Ս. պսակ կը կոչուի:

— Որովհետեւ արարողութեան ընթացքին փեսային եւ հարսին զլիւռն պսակ կամ թագ (Աստուծոյ փառքը, պատիւը, օրհնութիւնը) կը դրուի եւ այդ պատճառով ալ փեսան կը կոչուի թագաւոր եւ հարսը՝ թագուհի: Ոնկ ընտանիք պզտիկ թագաւորութիւն մը կը նկատուի եւ գաւակներն ալ իր հպատակները կը համարուին:

— Պօղոս առաքեալ ի՞նչ բանի կը նմանցնէ Ս. Պսակի խորհուրդը:

— Պօղոս առաքեալ սուրբ պսակի խորհուրդը կը նմանցնէ Քրիստոսի եւ անոր Եկեղեցիին փոխադարձ սիրոյն ու անքակտելի միութեան:

— Ս. Պսակի խորհուրդին ներկայանալէ առաջ թեկնածուները ի՞նչ պայմաններ լրացուցած ըլլալու են:

1) Ամուսնական կեանքի համար հասուն տարիք ունենան:

2) Ֆիզիքապէս եւ մտապէս առողջ ըլլան:

3) Ազատ կամքով՝ առանց պարագաներու բռնադատութեան որոշում տան իրարու հետ ամուսնանալու:

4) Նոյն կրօնքի եւ նոյն Եկեղեցւոյ անդամակցութիւն ունենան, որպէսզի ապագային բարդութիւններ չստեղծուին՝ նամանաւանդ զաւակներու դաստիարակութեան շուրջ:

5) Իրարու հետ մօտիկ ազգականութիւն չունենան:

— Ինչո՞ւ համար ֆահանգն հարսին ձեռքը փեսային կը յանձնէ:

— Ինչպէս որ Աստուած Եւան ստեղծելէ վերջ զայն Աղամին յանձնեց եւ երկուքը միաւորելով օրհնեց, նոյնպէս ալ քահանան հարսը կը յանձնէ փեսային եւ երկուքը միաւորելով Աստուծոյ անունով կ'օրհնէ:

— Ի՞նչ է խաչեղբօր դերը Ս. Պսակի արարողութեան ընթացքին:

— Խաչեղբայրը փեսային եւ հարսին օրինաւոր ամուսնութեան պաշտօնական վկան է, որ արարողութեան ընթացքին Քրիստոսի խաչը հովանի կը բռնէ անոնց գլխուն վերեւ: Յաճախ խաչեղբայրը ժողովուրդին կողմէ կոչուած է կնքահայր, որովհետեւ հինէն ի վեր պսակուողներու գլխուն վերեւ Ս. Խաչը հովանի բռնելու պատիւը շնորհուած է փեսային մկրտութեան կնքահօր կամ անոր որդւոյն:

— Աստուծոյ անուևով Եկեղեցիին կապած ամուսնութիւնը ոեւէ մէկը կրնա՞յ լուծել:

— Ո՛չ. այն պսակը զոր կատարած է Եկեղեցին, ոեւէ անձ, կամ քաղաքական իշխանութիւն չի կրնար լուծել:

— Եկեղեցին արտօնուած է լուծելու ամուսնութիւնը:

— Նկատելով որ Եկեղեցւոյ նուիրապետութիւնը այս աշխարհի վրայ, Քրիստոսի փոխանորդն ըլլալով զոյգերը միացնելու իշխանութիւնն ունի, բացառիկ պարագաներու ալ իշխանութիւն ունի, ամուսնալուծման վճիռ արձակելու: Ամուսնալուծման վճիռը ստորագրելու մենաշնորհը տրուած է վեհափառ կաթողիկոսին:

Ձեռնադրութիւն

- Ի՞նչ կը նշանակէ Ձեռնադրութիւն:
- *Ձեռնադրութիւն կը նշանակէ՝ կրօնական աստիճանի, կարգի տուչութիւն եւ կը կատարուի ընծայեալին գլխուն վրայ ձեռք դրուելով:*
- Որո՞նք կը կոչուին ընծայեալ:
- *Ընծայեալ կը կոչուին այն անձերը որոնք կը նուիրուին Աստուծոյ ծառայութեան եւ Եկեղեցւոյ սպասաւորութեան ու թեկնածու կը դառնան ձեռնադրութեամբ կրօնական աստիճան ստանալու:*
- Որո՞նք կրնան ձեռնադրութիւն կատարել:
- *Ձեռնադրութիւն կրնան կատարել Եկեղեցւոյ եպիսկոպոսները, որոնք իրենց կարգին ձեռնադրութեամբ ստացած են ձեռնադրելու իշխանութիւնը:*
- Ո՞վ հաստատեց ձեռնադրութեան խորհուրդը Ս. Եկեղեցիէն ներս:
- *Մեր Տէրը Յիսուս Քրիստոս հաստատեց ձեռնադրութեան խորհուրդը Ս. Եկեղեցիէն ներս՝ ձեռնադրելով առաքեալները՝ անոնց շնորհելով քահանայական եւ եպիսկոպոսական ամէն իշխանութիւն:*
- Առաքեալներ իրենց ստացած եկեղեցական իշխանութիւնը որո՞նք փոխանցեցին:
- *Առաքեալներ իրենց հիմնած եկեղեցիներուն վրայ եպիսկոպոսներ (տեսուչներ) կարգեցին եւ ձեռնադրութեամբ անոնց փոխանցեցին Յիսուս Քրիստոսէ իրենց ստացած եկեղեցական իշխանութիւնը:*
- Ի՞նչն է համար ձեռնադրութիւնը խորհուրդ է:
- *Որովհետեւ հաւատքով կ'ըմբռնենք թէ նուիրեալը ձեռնադրութեամբ Աստուծմէ կ'ընդունի եկեղեցական*

- կարգ, իշխանութիւն եւ երկնային իմաստութիւն:*
- Ի՞նչ կը նշանակէ նուիրապետութիւն:
- *Նուիրապետութիւն կը նշանակէ եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօնէութեան աստիճանաւորումը:*
- Քրիստոսի Ս. Եկեղեցին նուիրապետական քանի՞ աստիճաններ ունի:
- *Քրիստոսի Ս. Եկեղեցին սկզբնական շրջաններուն ունեցած է նուիրապետական երեք աստիճաններ, որոնք էին՝ սարկաւազութիւն, երիցութիւն (քահանայութիւն) եւ եպիսկոպոսութիւն: Մակայն դարերու ընթացքին երբ հաւատացեալներուն թիւը բազմանալով Եկեղեցին ընդարձակուեցաւ, անհրաժեշտութիւն դարձաւ պաշտօններու բաժանումը: Ուստի Եկեղեցւոյ հայրապետները ինը կարգեր հաստատեցին Եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ, որոնք են 1) Դռնապանութիւն, 2) Ընթերցողութիւն, 3) Երդմնեցուցչութիւն, 4) Ջահընկալութիւն, 5) Կիսասարկաւազութիւն, 6) Սարկաւազութիւն, 7) Քահանայութիւն, 8) Եպիսկոպոսութիւն, 9) Կաթողիկոսութիւն:*
- Վերոյիշեալ Եկեղեցական կարգերու առաջին չորս աստիճանները ի՞նչ կը կոչուին եւ ի՞նչ պաշտօններ կը վարեն:
- *Առաջին չորս աստիճանները կը կոչուին դպրութեան աստիճաններ.—*
- ա) *դռնապանութիւն.— դռնապանին պարտականութիւնն է Եկեղեցւոյ դուռը բանալ եւ գոցել ու հսկել կարգապահութեան:*
- բ) *ընթերցողութիւն.— ընթերցողին պաշտօնն է եկեղեցւոյ մէջ կարդալ Հին Կտակարանի գիրքերը եւ առաքելական թուղթերը:*
- գ) *Երդմնեցուցչութիւն.— Երդմնեցուցչին պաշտօնն է հիւանդներուն վրայ ձեռք դնելով Սուրբ Գիրք եւ աղօթք կարդալ: Մկրտութեան եկողները սատանայէն հրաժարեցընել եւ Յիսուս Քրիստոսի անունով շար ոգիները հալածել այսահարներէն:*

դ) Ձախրնկալութիւն. — Ձաճընկալին պարտականութիւնն է Եկեղեցւոյ ջահերը, կանթեղները եւ մոմերը վառել, եւ պատրաստել Ս. Պատարագի նշխարն ու գինին:

Այժմ դպիրները Եկեղեցւոյ մէջ վերոյիշեալ բոլոր պաշտօնները չեն կատարեր, այլ եկեղեցւոյ արարողութեանց իրենց բաժինը կը բերեն կարդալով ու երգելով: Ժամկոչներն ու լուսարարները կը զբաղին եկեղեցւոյ ջահավառութեամբ, մաքրութեամբ եւ այլ գործերով, իսկ կարգապահութեան կը հսկեն թաղականութեան անդամները:

— Որո՞նք կը կոչուին կղերիկոս:

— Դպրութեան չորս աստիճաններու տուչութենէն առաջ ձեռնադրիչ եպիսկոպոսը Սաղմոսերգութեան եւ Աւելածութեան պաշտօնները կու տայ ընծայեալին՝ մասնաւոր արարողութեամբ, եւ կը կտրէ անոր մազերը: Այս արարողութեամբ ընծայեալը կը դառնայ Աստուծոյ ծառայ եւ Եկեղեցւոյ սպասաւոր, ու կը կոչուի կղերիկոս կամ ժառանգաւոր:

— Ի՞նչ է կիսասարկաւագիւն պաշտօնը:

— Կիսասարկաւագը օգնականն է սարկաւագին: Իր պաշտօնն է եկեղեցական արարողութեանց ատեն քարոզները կարդալ, խնկարկել, պատարագիչը զգեստաւորել, Պատարագի ընթացքին դատարկ սկիհը խորհրդանոցէն սուրբ սեղան բերել, հոտ տանիլ, սպասաւորել եւ սուրբ սեղանին ծածկոցները լուալ:

Ներկայիս կիսասարկաւագութիւնը որպէս առանձին կարգ չի շնորհուի: Սարկաւագութեան թեկնածուն արարողութեան ընթացքին նախ կ'ընդունի կիսասարկաւագութեան աստիճանը եւ ապա կը ձեռնադրուի սարկաւագ:

— Ի՞նչ է սարկաւագիւն պաշտօնը:

— Սարկաւագը Ս. Եկեղեցւոյ գլխաւոր սպասաւորն է: Ան օգնականն է քահանային: Եկեղեցւոյ բոլոր արարողութեանց եւ խորհուրդներու կատարման ատեն սարկաւագը իր մասնակցութիւնը կը բերէ քարոզները կարդալով

եւ խնկարկելով: Իսկ Ս. Պատարագի ընթացքին կը կարդայ Աւետարանը եւ կը կատարէ վերաբերումը:

Ներկայիս մեր Եկեղեցիներուն մէջ կան նաեւ ուրարակիր դպիրներ, որոնք եպիսկոպոսէն ուրար կրելու արտօնութիւն ստանալով սարկաւագութեան պաշտօն կը կատարեն՝ բացի վերաբերումէն:

(Շարունակելի)

Ձեռնադրութիւն (Բ. Բաժին)

— Ի՞նչ է Բահանային պաշտօնը:

— Քահանայ կը նշանակէ քաւութիւն ընող: Ան միջնորդ է Աստուծոյ ու մարդոց միջեւ եւ կ'աղօթէ իր ժողովուրդին մեղքերուն քաւութեան համար:

Քահանան Քրիստոսի դեսպանն է եւ փոխանորդը այս աշխարհի վրայ: Իր պաշտօնն է Աստուծոյ հօտը հովուել իր պարտականութիւններն են՝ Աստուծոյ խօսքը քարոզել եւ օրէնքները սորվեցնել, երախաները մկրտել, դրոշմել, ժողովուրդը ապաշխարութեան հրաւիրել, խոստովանողները արձակել իրենց մեղքերէն, պատարագել, Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնը բաշխել, սուրբ պսակի արարողութիւն կատարել, հիւանդներուն այցելել եւ անոնց վրայ ձեռք դնելով աղօթել, ննջեցեալները թաղել, որբերուն, այրիներուն խնամք տանիլ...

— Ի՞նչ կը նշանակէ եպիսկոպոս եւ ի՞նչ է իր պաշտօնը:

— Եպիսկոպոս կը նշանակէ՝ վերատեսուչ, վերակացու, հսկիչ: Եպիսկոպոսը Ս. Եկեղեցւոյ իշխանաւորն է: Անոր պաշտօնն է հսկել շրջանի մը եկեղեցիներուն վրայ: Եպիսկոպոսը կրնայ կատարել Ս. Եկեղեցւոյ բոլոր խորհուրդները: Իր գլխաւոր պարտականութիւններն են՝ ձեռնադրել քահանաներ, սարկաւազներ եւ դպիրներ, ղեկավարել իր իշխանութեան ներքեւ գտնուող եկեղեցիներու պաշտօնէութիւնը, օծել եկեղեցի, տէրունական եւ սրբոց պատկերներ ու Եկեղեցւոյ սպասներ:

— Ի՞նչ կը նշանակէ կաթողիկոս եւ ի՞նչ է իր պաշտօնը:

— Կաթողիկոս կը նշանակէ՝ ընդհանրական հայրապետ, եպիսկոպոսապետ, քահանայապետ: Կաթողիկոսը գերագոյն պետն է Քրիստոսի Ս. Եկեղեցւոյն որեւէ մէկ ճիւղի նուիրապետութեան, որ տարածուած կ'ըլլայ ազգի մը կամ երկրի մը մէջ: Ան վերահսկիչն է իր իշխանութեան ներքեւ գտնուող թեմերուն:

Կաթողիկոսը որպէս հովուապետ կը հսկէ Եկեղեցւոյ կարգ-կանոնին եւ ուղղափառ դաւանութեան պահպանումին: Իրեն վերապահուած իրաւասութիւններն են՝ եպիսկոպոս ձեռնադրել, միւռոն օրհնել, եպիսկոպոսական ժողով գումարել, Ազգ. ընդհանուր ժողովին նախագահել, արժանաւոր եպիսկոպոսներուն Արքուիքեան եւ քահանաներուն Աւագուիքեան տիտղոսներ շնորհել եւ ամուսնալուծման վճիռ տալ:

— Որո՞նք կը կոչուին ԿՈՒՍԱԿՐՕՆ:

— Կուսակրօն կը կոչուին այն եկեղեցականները որոնք կ'ուխտեն շամուսնանալ ու նուիրուիլ միայն Քրիստոսի ու անոր Ս. Եկեղեցւոյ ծառայութեան: Կուսակրօն Եկեղեցականներ վեղար կը կրեն՝ ի նշան աշխարհէն հրաժարումի: Կուսակրօն քահանան վեղար ստանալով կը կոչուի արեղայ:

— Ի՞նչ կը նշանակէ ՎԱՐԴԱՊԵՏ:

— Վարդապետ կը նշանակէ՝ ուսուցանող, ուսուցիչ, մեկնաբանող: Վարդապետութիւնը եկեղեցական կարգ չէ, այլ տիտղոս է որ մասնաւոր արարողութեամբ կը շնորհուի այն արեղաներուն, որոնք ուսման որոշ մակարդակի մը հասնելով կը դրեն իրենց աւարտաճառը: Հայ Եկեղեցին ունի վարդապետական տասնըջորս աստիճաններ: Առաջին չորսը կը կոչուին մասնաւոր վարդապետութիւն: մնացեալ տասը կը կոչուին ծայրագոյն վարդապետութիւն: Ի նշան իր իշխանութեան՝ վարդապետը կը կրէ մասնաւոր գաւազան՝ Եկեղեցւոյ մէջ քարոզելու ատեն:

— Ի՞նչ է ԱՐՔՈՒԹԻԻՆԸ:

— Արքութիւնը եւս տիտղոս մըն է որ կաթողիկոսը կը

չնորհէ վաստակաւոր եպիսկոպոսներուն, զանոնք պատ-
ւելու համար:

— Ի՞նչ է ԱԻԱԳՈՒԹԻՒՆՆԸ:

— Աւագութիւնն ալ տիտղոս մըն է որ կաթողիկոսը
կը շնորհէ ղեկավարելու ձիրք ունեցող, ծիսագէտ եւ ժրա-
ջան ամուսնացեալ քահանաներուն:

— Հայ Եկեղեցւոյ մէջ ամուսնացեալ ամձեր եկեղե-
ցական ո՞ր աստիճանները կրնան ստանալ:

— Ամուսնացեալ անձեր կրնան եկեղեցական եօթը
աստիճաններ ստանալ. այսինքն՝ մինչեւ քահանայու-
թիւն: Վարդապետութիւնը, եպիսկոպոսութիւնն ու կաթո-
ղիկոսութիւնը վերապահուած են կուսակրօններուն:

— Ի՞նչ կը նշանակէ ՊԱՏՐԻԱՐԳ եւ ի՞նչ է իր պաշտօ-
նը:

— Պատրիարք կը նշանակէ՝ հայրապետ, եպիսկոպո-
սապետ: Երուսաղէմի, Անտիոքի, Կոստանդնուպոլսոյ եւ
կարգ մը ուրիշ հայրապետական Աթոռներու զահակայնե-
րը կը կոչուին Պատրիարք, որոնք հովուապետ եւ վերա-
հակիչ են իրենց հօտին:

— Ինչո՞ւ համար քահանան, եպիսկոպոսն ու կաթո-
ղիկոսը ձեռնադրութեան ետք կ'օծուին:

— Օծել կը նշանակէ՝ սրբացնել, մաքրել, նուիրա-
զործել: Սուրբ իւզը կամ միւռոնը խորհրդանիշն ու զգալի
նշանն է Սուրբ Հոգիին, որ կը սրբէ ենթական ու ներգոր-
ծելով կը զօրացնէ զայն: Հետեւաբար սուրբ միւռոնի օծու-
մով քահանան, եպիսկոպոսը եւ կաթողիկոսը սրբուելով
կը նուիրաբերուին Աստուծոյ:

— Հայաստանեայց Եկեղեցիին նուիրապետական
քանի՞ Աթոռներ ունի:

— Հայաստանեայց Եկեղեցին ունի նուիրապետական
չորս Աթոռներ. —

ա) Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն, որուն կեդ-
րոնն է Ս. Էջմիածինը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը
կոչուի նաեւ Մայրապոյն Պատրիարք:

բ) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, որուն
ներկայի կեդրոնն է Լիբանանի Անթիլիաս քաղաքը:

գ) Երուսաղէմի Պատրիարքութիւն:

դ) Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ երկու Պատրիարքութիւն-
ները ի հոգեւորս ենթակայ են Ամենայն Հայոց Կաթողի-
կոսութեան եւ միայն վարչական իրաւասութիւններ ունին
իրենց հօտերուն վրայ. հետեւաբար պատրիարքները
եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ միւռոնօրհնութիւն
չեն կատարեր, ոչ ալ Արքութիւն կը շնորհեն իրենց իշխա-
նութեան ներքեւ զտնուող եպիսկոպոսներուն: Մեր Պատ-
րիարքական զոյգ Աթոռներուն զահակայնները եպիսկոպո-
սական աստիճան կ'ունենան Արքութեան տիտղոսով:

ԺԵ. Դաս

Պատուանուններ Հայ Հոգեւորական Դասուն

— Հայ ժողովուրդը ի՞նչ պատուանուններ տուած է իր հոգեւորական դասուն:

— Հայ ժողովուրդը իր եկեղեցականներուն տուած է հետեւեալ պատուանունները.—

Կաթողիկոսին՝ Վեհափառ Տէր, Շնորհազարդ Տէր, Վեհաշնորհ Տէր:

Պատրիարքին՝ Ամենապատիւ Տէր:

Եպիսկոպոսին՝ Սրբազան Հայր:

Վարդապետին, Արեղային՝ Հայր Սուրբ:

Քահանային՝ Տէր Հայր:

Սարկաւազին՝ Տիրացու Եղբայր:

— Եկեղեցականները բարեւելու ատեն ի՞նչ կ'ըսեն:

— Ամէն աստիճանի կուսակրօն եկեղեցականները բարեւելու ատեն կ'ըսեն, «Աստուած օգնական» եւ միեւնոյն ատեն կը յիշեն անոնց պատուանունները: Կուսակրօն եկեղեցականներն ալ իրենց կարգին կը պատասխանեն ըսելով, «Աստուած պահապան»: Ամուսնացեալ քահանային կ'ըսեն, «Օրինեա Տէր» եւ ան կը փոխադարձէ ըսելով՝ «Աստուած օրինէ»:

Հրաժեշտ առնելու պարագային բաժնուողը դարձեալ կ'ըսէ «Աստուած օգնական» կամ «Օրինեա Տէր», իսկ եկեղեցականը կը պատասխանէ «մնացէք խաղաղութեամբ»:

Կաթողիկոսէն հրաժեշտ առնելու ատեն պէտք է ըսել, «Ժառայ եմ, Վեհափառ Տէր»:

— Հայ Եկեղեցականը աշխարհականներուն իր բարեւրտալու ատեն ի՞նչ կ'ըսէ:

— «Ողջոյն ձեզ», որ կը նշանակէ՝ ողջութիւն, առողջութիւն:

— Պաշտօնական առիթներով կամ գրաւոր թղթակցութեանց ատեն ի՞նչ մակդիրներ կը դրուին հայ եկեղեցականներու անուններուն առջեւ:

— Հայ եկեղեցականներու անուններուն առջեւ կը դրուին հետեւեալ մակդիրները՝ իրենց աստիճանին ու պաշտօնին համեմատ.—

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝

Նորին Սուրբ Օծութիւն

Տէր Տէր (անունը)

Կաթողիկոս եւ ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց

ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝

Նորին Ս. Օծութիւն

Տէր Տէր (անունը)

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԳԻՆ՝

Ամենապատիւ Տէր (անունը) Սրբազան Արքեպիսկոպոս (մականունը) Պատրիարք Հայոց Երուսաղէմի Առաքելական Աթոռոյն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՈՍԵ ՊԱՏՐԻԱՐԳԻՆ՝

Ամենապատիւ Տէր (անունը) Սրբազան Արքեպիսկոպոս (մականունը) Պատրիարք Հայոց կոստանդնուպոլսոյ: ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝

Գերաշնորհ Տէր (անունը) Սրբազան Արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս (մականունը):

ՎԱՐԳԱՊԵՏԻՆ ԿԱՄ ԱՐԵՂԱՅԻՆ՝

Հոգեշնորհ Տէր (անունը) Վարդապետ կամ Արեղայ (մականունը): Ծայրագոյն բառը կը դրուի վարդապետ բառէն առաջ եթէ ենթական ունի այդ տիտղոսը:

ՔԱՀԱՆԱՅԻՆ՝

Արժանապատիւ Տէր (անունը) քահանայ կամ Աւագ քահանայ (մականունը):

ՍԱՐԿԱԻԱԳԻՆ՝

Բարեշնորհ Տիրացու (անունը) սարկաւազ (մականունը):

ԺՁ. Դաս

Կարգ հիւանդաց կամ վերջին Օծում

— Ի՞նչ է կարգ հիւանդաց կոչուած խորհուրդը:

— Կարգ հիւանդաց կոչուած խորհուրդը արարողութիւն մըն է որ կը կատարուի հիւանդներուն վրայ ձեռք դնելով, աղօթելով եւ երբեմն ալ միւսոնով օծելով:

— Ո՞վ հաստատեց այս խորհուրդը:

— Յիսուս հաստատեց այս խորհուրդը եւ իր աշակերտներուն իշխանութիւն տուաւ հիւանդներուն վրայ ձեռք դնելու եւ աղօթելու:

— Յակոբոս Առաքեալն ալ իր ընդհանրական թուղթին մէջ կ'ըսէ, «Եթէ ձեզմէ մէկը հիւանդ է, Եկեղեցիին երէցները թող կանչէ ու անոր վրայ աղօթք ընեն եւ Տիրոջ անունով օծեն զայն: Եւ հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը ու Տէրը զայն ոտքի պիտի հանէ եւ եթէ մեղք ալ գործեր է, պիտի ներուի անոր: Զեր յանցանքները իրարու խոստովանեցէք եւ աղօթք ըրէք իրարու համար, որպէսզի բժշկուիք. քանզի արդարին ջերմեռանդ աղօթքը մեծ ազդուութիւն ունի:

— Ինչո՞ւ համար խորհուրդ կը կոչուի «կարգ հիւանդաց»ը:

— Որովհետեւ հաւատքով կ'ըմբռնենք թէ Աստուած իր արդար ծառաներուն ջերմեռանդ աղօթքները ընդունելով բժշկութիւն կը շնորհէ հաւատացեալ հիւանդին:

— Կարգ հիւանդաց խորհուրդի կատարումին համար ի՞նչ կը պահանջուի հիւանդէն:

— Հաւատք առ Աստուած ու զղջում իր գործած կամայ եւ ակամայ մեղքերուն համար: Մանուկներու պարագային արարողութիւնը կը կատարուի ծնողներու հաւատքին վրայ:

— Ինչո՞ւ համար հիւանդէն կը պահանջուի զղջում իր մեղքերուն համար:

— Որովհետեւ առհասարակ հիւանդութիւններն ու ախտերը արդիւնք են անբնական կենցաղի, մարդոց մոլութիւններուն եւ մեղքերուն: Ուստի հիւանդը իր բժշկութեան համար, երէցէն աղօթք հայցելու ատեն, իր մեղքերուն եւ գէշ արարքներուն համար ալ թողութիւն խնդրելու է:

— Ինչպէ՞ս կը կատարուի հիւանդաց կարգի արարողութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ ծէսով:

— Քահանան Տէրունական Աղօթքը արտասանելէ ետք նախ կը կարդայ «Ողորմեա ինձ Աստուած» զղջումի սաղմոսը ու կը խոստովանեցնէ հիւանդը: Աւետարանէն կը կարդայ Յիսուսի կատարած բժշկութիւններէն հաստուած մը ու ձեռքը հիւանդին վրայ դնելով կ'աղօթէ առ Աստուած որ բժշկութիւն շնորհէ եւ նոյն ատեն ներք անոր մեղքերը: Ապա համբուրել կու տայ խաչն ու Աւետարանը: Արարողութեան լրումին՝ եթէ հիւանդը փափաք յայտնէ կը հաղորդուի:

— Ի՞նչ է վերջին օծումը:

— Ծանր եւ մահամերձ հիւանդներուն սուրբ իւզով (միւսոնով) օծումն է:

— Մահամերձ հիւանդին սուրբ իւզով օծումը ի՞նչ բանի նշանակ է:

— Սուրբ իւզով օծել կը նշանակէ Տիրոջ համար սրբել, մաքրել ու կնքել: Հետեւաբար սուրբ իւզով օծումը հիւանդին համար զգալի նշան է՝ թէ արձակուած եւ սրբուած է իր մեղքերէն եւ Քրիստոսով պիտի ննջէ:

— Հայաստանեայց Եկեղեցին վերջին օծումը կը կատարէ՞ մահամերձ հիւանդներուն:

— Անցեալ դարերուն, կարգ հիւանդացի արարողութեան ընթացքին, յաճախ կատարուած է մահամերձ հիւանդներու օծում. սակայն ներկայիս չ'օծեր, քանի որ զրոյմի խորհուրդին միացուցած է վերջին օծման արարո-

դուժիւնը: Դրոշմի խորհուրդի արարողութեան ատեն քահանան սուրբ միւռոնով կ'օծէ մկրտեալին մարմինին ինը մասերը, որոնց երեքը՝ ճակատը, սիրտն ու կոնակը դրոշմի խորհուրդին կը վերաբերին. իսկ մնացեալ վեց մասերը՝ աչքերը, ականջները, հոտոտելիքը, բերանը, ձեռքերն ու ոտքերը կը պատկանին վերջին օժման:

— Հիւանդաց կարգի արարողութիւնը Ի՞նչ կը ներգործէ հիւանդին:

— Հիւանդը թողութիւն կը ստանայ իր մեղքերուն համար եւ հոգեկան խաղաղութեան կ'արժանանայ: Եթէ Աստուծոյ կամքն ըլլայ, ոտքի կ'ելլէ եւ հոգեւորապէս կը զօրանայ: Իսկ եթէ հիւանդին ցաւերը մահուան համար են, քաջութիւն կը ստանայ համբերութեամբ տոկալու անոնց, որովհետեւ Աստուծոյ ողորմութեան յոյսով լեցուած կ'ըլլայ իր հանդերձեալ կեանքին համար:

ԺԷ. Դաս

Մեղք եւ Շնորհք

— Ի՞նչ կը նշանակէ մեղք:

— Մեղք կը նշանակէ՝ յանցանք, անիրաւութիւն, զանցառութիւն, անհնազանդութիւն Աստուծոյ, հակառակութիւն ճշմարտութեան զէմ:

— Մեղքը ինչպէ՞ս ծագում առաւ մարդկային կեանքէն ներս:

— Մեղքը ծագում առաւ մեր նախածնողաց՝ Ադամի եւ Եւայի անհնազանդութեան պատճառով: Այս առաջին մեղքը կոչուեցաւ սկզբնական կամ Ադամական մեղք, որ փոխանցուեցաւ իրենց սերունդին:

— Ո՞վ մղեց մարդը անհնազանդութեան:

— Մարդուն նախանձորդ թշնամին՝ չար սատանան:

— Ի՞նչ է մեղքին հետեւանքը կամ վարձքը:

— Մեղքին հետեւանքը պատիժ է եւ վարձքը՝ մահ:

— Ինչպէ՞ս կը քաւուին մեղքերը:

— Ադամական մեղքը կը քաւուի Ամենասուրբ Երրորդութեան անունով մկրտութեամբ, իսկ մկրտութենէ ետք պործուած մեղքերը՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:

— Ուրկէ՞ յառաջ կու գայ մեղքը:

— Մեղքը յառաջ կու գայ մարդուն ցանկութենէն: Այսինքն՝ Աստուծոյ կողմէ մարդուն սահմանուած բարիքներէն եւ վայելքներէն աւելին ունենալու, իւրացնելու եւ յափշտակելու անյազ փափաքէն:

— Ո՞ր մեղքերը ներելի կը կոչուին:

— Այն բոլոր մեղքերը որոնք մարդկային տկարութեան արդիւնք են կը կոչուին ներելի մեղքեր:

— Ո՞ր մեղքերը աններելի կամ մահացու կը կոչուին:

— Այն մեղքերը որոնք կամաւորապէս Սուրբ Հոգւոյն դէմ կը գործուին, այսինքն՝ աստուածային ճշմարտութիւնները պիտանալով հանդերձ Աստուծոյ թաղաւորութեան հաստատման դէմ կը գործուին, կը կոչուին անմեղքի կամ մահացու մեղքեր:

— Յիսուս ի՞նչ կ'ըսէ անմեղքի մեղքերու մասին:

— Յիսուս կ'ըսէ, «Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց»:

*
**

— Ի՞նչ կը նշանակէ շնորհք:

— Ծնորհք կը նշանակէ՝ նուէր, պարգև զոր ստացողը արժանացած կ'ըլլայ յատուկ բարեհաճութեամբ մը՝ տուողին կողմէ: Կրօնական առումով շնորհք կը նշանակէ Աստուծոյ անհուն սէրէն բղխող եւ բաշխուող նուէր կամ պարգև մարդ արարածին:

— Որո՞նք են Աստուծոյ տուած բարիքները մարդոց վայելիքի համար:

— Արեւը, անձրեւը, երկրին արտադրած բանջարեղենները, պտուղները, եւ այլեւայլ օգտակար բաները Աստուծոյ պարգեւած բարիքներն են մարդ արարածին վայելքին համար:

Նաեւ Աստուծոյ շնորհներն են մարդ արարածին տրուած գեղարուեստական, բանաստեղծական, երաժշտական, գրական, գիտական, եւ այլեւայլ ձիրքերն ու տաղանդները:

— Ո՞րն է Աստուծոյ պարգեւած ամենամեծ շնորհքը մարդ արարածին:

— Աստուծոյ կողմէ մարդ արարածին տրուած ամենամեծ շնորհքը իր Միածին Որդւոյն Յիսուս Քրիստոսի առաքումն է աշխարհի փրկութեան համար:

— Ի՞նչ ըրաւ Յիսուս աշխարհի փրկութեան համար:

— Խաչին վրայ զոհուեցաւ, իր սուրբ արիւնը թափեց ու իր կեանքը նուիրեց Հօր Աստուծոյ՝ մարդոց մեղքերու քաղութեան եւ թողութեան համար: Հայր Աստուած ընդունեց իր Միածին Որդւոյն զոհաբերութիւնն ու միջնորդութիւնը եւ բացաւ դրախտին դուռը մարդոց առջեւ որ փակուած էր Ազամի մեղքին պատճառով:

Քրիստոսի արեան հեղումով եւ անոր բարեխօսութեամբ Հայր Աստուծոյ պարգեւած թողութիւնը մեծագոյն շնորհն է մեղաւոր մարդկութեան համար:

— Ի՞նչ է մարդուն պարտականութիւնը իր ստացած շնորհներուն նկատմամբ:

— Մարդուն պարտականութիւնն է՝ իր ստացած շնորհները գործածել իր Արարիչին փառքին եւ իր նմաններուն բարօրութեան համար:

— Աստուած որո՞նք կը գարդարէ իր պէս պէս շնորհներովը:

— Իր խոնարհ, հեզ ու հաւատարիմ զաւակները: Տէրը անոնց շնորհքը կ'աւելցնէ ու կը զօրացնէ զանոնք հոգեւորապէս:

— Սուրբ Հոգւոյն գալուստով առաքելներ ի՞նչ շնորհներ ստացան:

— Առաքելներուն ստացած շնորհներն էին՝ երկնային իմաստութիւն, զօրութիւն, միմիթարութիւն, քաջութիւն, զանազան լեզուներով զԱստուած փառաբանելու կարողութիւն, Աստուծոյ խօսքը մեկնելու եւ քարոզելու հմտութիւն եւ առաջնորդութիւն:

Աստուծոյ Պատուիրանները

— Ի՞նչ կը նշանակէ պատուիրան:

— Պատուիրան կը նշանակէ՝ պատուէր, հրահանգ, այսինքն՝ բան մը կատարելու կամ չկատարելու համար արձակուած խօսք: Կրօնական առումով պատուիրանը Աստուծոյ կողմէ մարդուն համար դրուած օրէնքներու եւ կանոններու գործադրութեան հրամանն ու իշխանն է:

— Աստուած ինչո՞ւ համար տուած է իր պատուիրանները:

— Մարդ արարածը մեղքէ զգուշացնելու համար:

— Ի՞նչ է ՏԱՍՆԱՐԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ:

— Աստուծոյ կողմէ տրուած տասը պատուիրաններ են՝ մարդ արարածը ուղղելու եւ իր Արարիչին մօտեցնելու համար:

— Աստուած ո՞ր եւ որո՞ւ ձեռքով տուաւ տասը պատուիրանները:

— Աստուած Սինա լեռան վրայ Մովսէս մարգարէին յանձնեց տասը պատուիրանները եւ պատուիրեց անոր որ զանոնք փոխանցէ իր ժողովուրդին:

— Որո՞նք են Աստուծոյ տուած տասը պատուիրանները:

— Տասը պատուիրաններն են՝

- ա) Ինձմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս,
- բ) Դուն քեզի կուռք չչինես:
- գ) Աստուծոյ անունը պարապ տեղ բերանդ չառնես:
- դ) Եօթներորդ օրը սուրբ պահէ:
- ե) Պատուէ քու հայրդ ու մայրդ:
- զ) Սպանութիւն մի՛ ըներ:

է) Ծնութիւն մի՛ ըներ:

ը) Գողութիւն մի՛ ըներ:

թ) Սուտ վկայութիւն մի՛ ըներ:

ժ) Քու դրացիդ ունեցածին մի՛ ցանկար:

— Ո՞րն է մեծագոյն պատուիրանը:

— Այս հարցումին Յիսուս պատասխանեց եւ ըսաւ, «Սիրէ քու Տէր Աստուածդ քու բոլոր սրտովդ, քու բոլոր հոգիովդ, եւ քու բոլոր մտքովդ: Այս է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Եւ երկրորդը ասոր նման է.— Սիրէ ընկերդ անձիդ պէս»:

— Յիսուսի կողմէ ուրիշ ի՞նչ պատուէր տրուած է ընկերային կեանքը սիրոյ եւ խաղաղութեան մէջ պահելու համար:

— Յիսուս իր լեռան քարոզին մէջ ըսած է, «Ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք»:

Ուրիշ առիթով մըն ալ պատուիրեց, «Ներեցէք եթէ ոեւէ մէկուն զէմ բան մը ունիք»:

— Մարդ արարածը ինչպէ՞ս կրնայ ցոյց տալ իր սէրը իր Արարիչին հանդէպ:

— Մարդ արարածը իր Արարիչին հանդէպ իր սէրը ցոյց կրնայ տալ իր նմանները սիրելով եւ պահելով Տիրոջ պատուիրանները: Յովհաննէս առաքեալ կ'ըսէ, «Եթէ մէկը ըսէ, ես կը սիրեմ զԱստուած, եւ իր եղբայրն ատէ, ստախօս է այդպիսին. զի այն որ չի սիրեր իր եղբայրը՝ զոր կը տեսնէ, ինչպէ՞ս կրնայ սիրել զԱստուած զոր չի տեսներ: Եւ մենք սա պատուէրն ունինք, թէ՛ ով որ կը սիրէ զԱստուած՝ պարտի սիրել նաեւ իր եղբայրը»:

ԺԹ. Դաս

Եօթը Առաքինութիւններ եւ Եօթը Մոլութիւններ

— Ի՞նչ կը նշանակէ առաքինութիւն:

— Առաքինութիւն կը նշանակէ՝ բարեմասնութիւն, լաւութիւն, որ յառաջ կու գայ մարդուն բարի տրամադրութենէն:

— Որո՞նք են եօթը առաքինութիւնները:

— Եօթը առաքինութիւններն են՝

- 1) Խոնարհութիւն,
- 2) Եղբայրասիրութիւն (մարդասիրութիւն),
- 3) Հեզութիւն,
- 4) Աշխատասիրութիւն,
- 5) Ողորմածութիւն
- 6) Ժուժկալութիւն
- 7) Ողջախոհութիւն

— Առաքինութիւնները ինչի՞ կ'առաջնորդեն մարդը:

— Առաքինութիւնները մարդը կ'առաջնորդեն կատարելութեան եւ սրբութեան:

— Ի՞նչ կը նշանակէ մոլութիւն:

— Մոլութիւն կը նշանակէ՝ վատ սովորութիւն, գէշ ունակութիւն, հոգեկան ախտ, որ յառաջ կու գայ մարդուն յոռի ցանկութիւններէն: Մոլութիւնը ծածուկ եւ մահացու մեղք է որ կը ծուարի մարդուն ներսիդին:

— Որո՞նք են եօթը մոլութիւնները:

— Եօթը մոլութիւններն են՝

- 1) Հպարտութիւն,
- 2) Նախանձ,
- 3) Բարկութիւն,
- 4) Մուլութիւն,
- 5) Ազահութիւն,

6) Որկրամոլութիւն,

7) Բղջախոհութիւն:

— Մոլութիւնները ինչի՞ կ'առաջնորդեն:

— Մոլութիւնները մարդը կը մղեն անբնական, արտաուոց եւ ծայրայեղ արարքներու. կը խախտեն անոր բարոյականը, կը խանգարեն հոգեկան ու մարմնական առողջութիւնը եւ կը գգետնեն զայն մեղքի տիղմին մէջ:

Մոլութիւն մը յաճախ ծնունդ կու տայ ուրիշ մոլութեան:

— Ի՞նչ է ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ:

— Հպարտութիւնը ամբարտաւանութիւն է եւ մեծամրտութիւն: Անոր ենթակայ եղող անձը ինքզինք միշտ գերազանց կը նկատէ. իր փառքին, իր եսին համար կ'անտեսէ ու կ'արհամարէ իր նմանները եւ չ'ուզեր անդրադառնալ թէ զանոնք անարգելով զԱստուած անարգած կ'ըլլայ:

Հպարտութիւնը կը կործանէ մարդը:

— Ի՞նչ է նախանձը:

— Նախանձը ուրիշներու յաջողութեան, վայելած շնորհքին հանդէպ անհանդուրժողութիւն եւ զայրոյթ է: Նախանձը մարդը կը մղէ յափշտակութեան, զրպարտութեան, նենգամտութեան, ոճրագործութեան եւ ամէն տեսակ չարութեան:

Նախանձը ենթակային սիրտը կը մաշեցնէ եւ մարմինը կը տկարացնէ:

— Ի՞նչ է բարկութիւնը:

— Բարկութիւնը անտեղի զայրոյթ եւ հոգիի զրգուլթիւն է որ յառաջ կու գայ դիմացիներին հանդէպ սնուցուող ատելութենէն ու սիւէն:

Բարկութիւնը մարդը կը մղէ մոլեգնութեան եւ խենթութեան. կը ցնցէ մարմինը, կը տկարացնէ ջիղերը, անհանգիստ կ'ընէ սիրտը եւ խռովքի մէջ կը պահէ միտքն ու հոգին:

— Ի՞նչ է ծուլութիւնը:

— Ծուլութիւնը խուսափում է աշխատանքէ ու պարտականութենէ: Անհնազանդութիւն է Աստուծոյ տնօրի-

նութեան դէմ: Աստուած Աղամին տնօրինեց որ իր հացը ուտէ ճակտին քրտինքով՝ լծակից ունենալով իր կինը՝ Եւան:

Սուլութիւնը պէս պէս փորձութիւններու եւ մեղքերու դուռ կը բանայ եւ անոնց ընթացք կու տայ:

Սուլութիւնը իրեն ենթակայ եղողը կ'ազգաստացնէ ու յետին թշուառութեան կը մատնէ:

— Ի՞նչ է ազահուփիւնը:

— Ազահութիւնը չափազանցեալ ընչասիրութիւն է, որ մարդը դերի կը զարձնէ դրամի եւ ստացուածքի: Ազահը իր միտքը միշտ կը կեդրոնացնէ դրամ դիզելու եւ ստացուածք աւելցնելու վրայ:

Արձաթասիրութիւնը (դրամասիրութիւնը) արմատն է ամէն չարութիւններու եւ մեղքերու:

Ազահութիւնը իրեն անձնատուր եղողները կը մեռցընէ:

— Ի՞նչ է որկրամոլութիւնը:

— Որկրամոլութիւնը մարմինին բնական պահանջէն աւելի ուտելու ունակութիւնն է:

Որկրամոլութիւնը կը վնասէ մարմինին, միտքին եւ հոգիին առողջութեան: Որկրամոլը անյազ ուտելուն պատճառով ինքզինք կը գլորէ հոգեկան եւ մարմնական հիւանդութեանց վիճին մէջ, ուրկէ դժուար կ'ըլլայ գուրս գալ եւ հոգեպէս նորոգուիլ: Արբեցութիւնն ու ծխամոլութիւնն ալ մաս կը կազմեն որկրամոլութեան եւ կը քայքայեն մարդուն առողջութիւնը:

— Ի՞նչ է քզջախոնքութիւնը:

— Բղջախոնքութիւն կը նշանակէ՝ անառակութիւն, անբարոյութիւն: Բղջախոնքութիւնը յառաջ կու գայ դէշ խորհուրդներէ, անբարոյ ընթերցումներէ, լպիրշ խօսքերէ, աղտոտ տեսարաններ դիտելէ եւ այլեւայլ ցանկայարոյց վայրեր յաճախելէ:

Բղջախոնքութիւնը կ'ապականէ մարդուն մարմինը, միտքն ու հոգին:

— Ո՞վ կրնայ ազատել մարդ արարածը այս մոլութիւններէն:

— Մեր Տէրը Յիսուս Քրիստոս միայն կրնայ ազատել մարդ արարածը այս մոլութիւններէն: Ան իրեն դիմողներուն կ'այցելէ, կը ներէ անոնց մեղքերը, կը մաքրէ զանոնք ու կը զարգարէ առաքինութիւններով:

Հպարտութիւնը կը փոխակերպէ խոնարհութեան, նախանձը՝ եղբայրսիրութեան (մարդասիրութեան),

Բարկութիւնը՝ հեզութեան,
Սուլութիւնը՝ աշխատասիրութեան,
Ազահութիւնը՝ ողորմածութեան,
Որկրամոլութիւնը՝ ժուժկալութեան,
Բղջախոնքութիւնը՝ ողջախոնքութեան:

Ի. Գաս

Աղօթք

— Մարդ արարածք ինչպե՞ս կը յարաբերի իր Արարիչին հետ:

— Մարդ արարածը աղօթելով կը յարաբերի իր Արարիչին հետ:

— Ի՞նչ է աղօթքը:

— Աղօթքը հաւատացեալին կողմէ Աստուծոյ ուղղուած փառաբանութեան խօսք կամ խնդրանք է: Աստուծոյ մատուցուած որեւէ սաղմոս, երգ, բանաստեղծութիւն, շարադրութիւն, ուղերձ կամ ասութիւն աղօթք է:

— Աստուծոյ հետ հաւատացեալին հաղորդակցութիւնը ի՞նչ բանի նմանցում է:

— Հօր եւ զակի յարաբերութեան նմանցում է: Սաղմոսներգուն կ'ըսէ, «Ինչպէս որ հայր մը կը գթայ իր որդիներուն վրայ, այնպէս ալ Տէրը կը գթայ իրմէ վախճողներուն վրայ»: Աստուած բոլոր հաւատացեալներուն համար ըսած է, «Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք ինծի տղաք ու աղջիկներ պիտի ըլլաք»:

— Մարդ արարածը ինչո՞ւ համար կ'աղօթէ:

— ՉԱստուած փառաւորելու, իր մեղաւոր, անկեալ վիճակէն վերականգնելու եւ հոգիով զօրանալու համար:

— Ի՞նչ է առանձնական աղօթքը:

— Առանձնական աղօթք կը կոչուի անհատական այն աղօթքը զոր ենթական կը կատարէ առանձինն՝ միայն Աստուծոյ ներկայութեան:

— Ի՞նչ է հաւարակաց կամ հրապարակային աղօթքը:

— Այն աղօթքները որոնք Աստուծոյ կը մատուցուին հաւաքուած բազմութեան մը կողմէ, կը կոչուին հասարակաց կամ հրապարակային աղօթք: Եկեղեցական բոլոր

արարողութիւնները մաս կը կազմեն հասարակաց աղօթքի կամ պաշտամունքի:

— Ի՞նչ օգուտներ կը վայելէ հաւատացեալը աղօթքի միջոցաւ:

— Հաւատացեալը աղօթքի միջոցաւ զօրութիւն կը ստանայ եւ քաջաբար կը դիմագրաւէ իր առջեւ ցցուող փորձանքներն ու նեղութիւնները, կը վայելէ Աստուծոյ հովանաւորութիւնը եւ կ'ունենայ սրտի խաղաղութիւն:

— Յիսուս եւ իր աշակերտները ի՞նչ ըսին աղօթքի մասին:

— Յիսուս ըսաւ՝ «պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ»: Իսկ մատնութեան գիշերը իր աշակերտներուն պատուիրեց, «Արթուն մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք»:

Առաքեալները մեծ կարեւորութիւն տուին աղօթքին: Անոնք իրենց քարոզութեանց առընթեր միշտ աղօթեցին. նոյն ատեն կոչ ըրին ըսելով՝ «Ստէպ (յաճար) աղօթքի կեցէք», «Անդադար աղօթք ըրէք», «Շարունակ աղօթքի ետեւէ եղէք», «Զգաստ եղէք եւ աղօթքի մէջ արթուն կեցէք»:

— Օրուան ո՞ր պահերուն պէտք է աղօթել:

— Հաւատացեալ Քրիստոնեայ մը որեւէ մէկ ատեն՝ տան մէջ թէ դուրսը՝ յարմար առիթներուն կրնայ աղօթել ու յարաբերիլ Աստուծոյ հետ:

Պատշաճ է որ հաւատացեալը ամէն առաւօտ արթննալէ ետք եւ գիշերը չպառկած աղօթէ: Անհրաժեշտ է նաեւ ճաշելէ առաջ եւ կշտանալէ ետք աղօթել ու փառք տալ Աստուծոյ: Միշտ լաւ է որեւէ գործի ձեռնարկելէ, ճամբորդելէ առաջ աղօթել Աստուծոյ եւ խնդրել անոր առաջնորդութիւնն ու զօրութիւնը:

— Ի՞նչ դիրք եւ ձեւ պէտք է որդեգրել աղօթքի պահուն:

— Աղօթելու ձեւերը կը տարբերին տեղէ տեղ եւ անհատէ անհատ: Ոմանք կ'աղօթեն ծունկի դալով, ուրիշներ ոտքի կայնած կամ նստած վիճակով. կարգ մը անձեր ձեռ-

նամած կը կենան կամ բազկատարած կ'աղօթեն: Էականը արտաքին ձեւակերպութիւնը չէ, այլ հոգիով ու ճշմարտութեամբ սրտի խորերէն զԱստուած պաշտելն է: Մակայն յարմար է որ հրապարակային աղօթքի ընթացքին յարգուին եկեղեցւոյ կողմէ որդեգրուած ձեւերը:

Պօղոս առաքեալի պատուէրն է որ այլ մարդիկ աղօթեն բաց գլուխով, իսկ կիներ աղօթքի ատեն իրենց գլուխը ծածկեն:

— Ո՞րն է Տէրունական Աղօթքը:

— Տէրունական Աղօթքը Յիսուսի սորվեցուցած աղօթքն է: Այս աղօթքը ուղեցոյց է բոլոր հաւատացեալներուն: Ոեւէ Քրիստոնեայ անպայման պէտք է գայն սորվի եւ ամէն ատեն աղօթէ զԱստուած փառաւորելու եւ անոր շնորհներուն արժանանալու համար:

Յիսուս այս աղօթքը սորվեցնելէ ետք կը նշէ հետեւեալը. — «Եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ. իսկ եթէ չներէք մարդոց իրենց յանցանքները. ձեր Հայրն ալ ձեզի չի ներէր ձեր յանցանքները:

Տէրունական Աղօթքը

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո: Եղիցին կամք քո որպէս յերկինս՝ եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Տէրունական Աղօթքին աշխարհարար թարգմանութիւնը

Հայր մեր որ երկինքս ես, քու անունդ սուրբ ըլլայ: Բու թագաւորութիւնդ գայ: Բու կամքդ ըլլայ երկրի վրայ՝

ինչպէս երկինքի մէջ: Մեր ամէնօրեայ հացը սուր մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն: Եւ մեզ փորձութեան մի տանիր. այլ փրկէ մեզ չարէն: Վասնզի քուկդ է արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

— Աստուած որո՞նց աղօթքները կը լսէ:

— Աստուած կը լսէ այն անձերուն աղօթքները, որոնք խոնարհ սրտով ու անկեղծ հոգիով կը մօտենան իրեն: Հետեւեալը Աստուծոյ ներկայացող անձը նախ պէտք է խոնարհի Անոր առջեւ, խոստովանի իր մեղքերն ու թեթութիւնները եւ ապա մատուցանէ իր աղօթքը:

Պահեցողութիւն

— Ի՞նչ է պահեցողութիւնը:

— Պահեցողութիւնը ինքնագազառմի, ինքնամփոփումի պահ մըն է որ կը կատարուի կամաւոր անօթութեամբ: Պահեցողութիւնը կը կոչուի նաեւ ծոմապահութիւն, պահք:

— Ի՞նչ է պահեցողութեան նպատակը:

— Պահեցողութեան նպատակն է մարմինը տկարացնել եւ հոգին զօրացնել: Մարդուն մարմինը հակամէտ է չափազանցութիւններու. այսինքն՝ կը ցանկայ աւելի ուտելու, իւրացնելու եւ վայելելու, ու այդ պատճառով կը մեղանչէ Աստուծոյ օրէնքներուն դէմ: Հետեւաբար պահեցողութիւնը անհրաժեշտ է մարմինին պահանջները չափաւորելու եւ ուղղելու համար:

— Ի՞նչ կը նշանակէ ներկայիս պահք բռնել:

— Ներկայիս պահք բռնել կը նշանակէ որոշուած օրերուն հրաժարիլ մսեղէն եւ իւղոտ ուտելիքներէ ու սնանիլ միայն բանջարեղէնով եւ ընդեղէնով:

Սկզբնական շրջաններուն պահքը միայն ծոմապահութիւն էր: Սակայն եկեղեցին յարմար տեսաւ որ Ֆիզիքայէս տկար եղող անձեր ծոմապահութեան փոխարէն պահք բռնեն, այսինքն հրաժարին միայն մսեղէն եւ իւղոտ ուտելիքներէ եւ ազատ ըլլան կանաչեղէնով ու ընդեղէնով սնանելու:

— Առհասարակ ո՞ր պարագաներուն անհրաժեշտ է պահեցողութիւնը:

— Պահեցողութիւնը անհրաժեշտ է սատանային ու մեղքին դէմ պայքարելու եւ հոգեւորապէս միշտ արթուն մնալու համար, մասնաւորաբար ապաշխարութեան ատեն,

փորձութիւններու դէմ պայքարելու ատեն, սուրբ հաղորդութեան մօտենալու ատեն, այսահարներէն չար ողիները վանելու համար եւ որեւէ ժամանակ կիրքերուն եւ ցանկութիւններուն յաղթելու համար:

— Ծոմապահութեան կամ պահքի հետ համընթաց ի՞նչ բաներ կատարուելու են:

— Աղօթք եւ ողորմութիւն: Թելադրելի է որ հաւատացեալներ ծոմապահութեան կամ պահքի շնորհիւ խնայւածը յատկացնեն աղքատներուն կամ բարի նպատակներու:

— Պահեցողութիւնը պարտաւորի՞չ հրահանգ է հաւատացեալներուն:

— Ո՛չ. պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ չէ. այլ՝ յանձնարարելի կանոն: Պահեցողութիւնը պէտք է ըլլայ կամաւոր եւ ինքնարուիս:

— Եկեղեցին ինչո՞ւ համար պահքի օրեր հաստատած է:

— Ժողովուրդը ուղղելու, չափաւորութեան եւ ժուժկալութեան վարժեցնելու համար:

— Հայ Եկեղեցին ո՞ր օրերը պահքի օրեր նշանակած է:

— Հայ Եկեղեցին պահքի օրեր սահմանած է Զատիկը կանխող քառասնօրեայ շրջանն ու Աւագ շաբաթը, Ս. Մըննդեան, Վարդափառի, Ս. Աստուածածնի վերափոխման, Խաչվերացի եւ Վարագայ Խաչի շաբաթապահքերը, նաեւ Առաջաւորաց, Յիսնակի եւ կարգ մը սրբոց պահքերը: Ամէն Զորեքշաբթի եւ Ուրբաթ պահքի օրեր են, բացի Ս. Զատիկի տօնէն մինչեւ Հոգեգալուստ, ուր պահքի համար սահմանուած որեւէ օր չկայ:

— Պահքի օրերուն հաւատացեալներուն թոյլատրելի՞ են խրախնամքները:

— Ո՛չ, պահքի օրերուն հաւատացեալներուն թոյլատրելի չէ խրախնամք կամ հարսանիք կատարել, որովհետեւ այդ օրերը յատկացուած են մեղքերու համար զղջալու եւ ապաշխարելու: Հետեւաբար այդ օրերուն մարդիկ առաւել-

լարար մտածելու են հոգեւորապէս զօրանալու մասին: Աւօրեայ աշխատանքէն ետք իրենց ժամանակը անցընելու են աղօթքով, սուրբ գրային ընթերցումներով եւ շինիչ խօսակցութիւններով:

— Պահեցողութիւնը ի՞նչ օգուտներ կ'ընծայէ հաւատացեալին:

— Պահեցողութիւնը կը վերանորոգէ, հոգեւորապէս արթուն կը պահէ, խոնարհութիւն կը սորվեցնէ, կը չեզոքացնէ ենթակային յոռի սովորութիւններն ու մոլութիւնները, սատանան կը վանէ եւ հաւատացեալին յարաբերութիւնը կը սերտացնէ Աստուծոյ հետ:

— Յիսուս ի՞նչ կը պատուիրէ պահեցողներուն:

— Յիսուս կ'ըսէ՝ «Երբ ծոմ պահէք, կեղծաւորներու պէս արտմած մի՛ ըլլաք, որոնք կ'աւրեն իրենց երեսը, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այն իսկ է անոնց վարձքը: Սակայն դուն երբ ծոմ պահես, օժէ՛ դուխդ, լուս՛ երեսդ, որպէսզի մարդոց պահեցողի պէս չերեւիս, այլ Հօրդ՝ ծածկապէս. եւ Հայրդ որ կը տեսնէ ծածուկը՝ պիտի հատուցանէ քեզի»:

ԻՌ. Դաս

Քրիստոսի Երկրորդ Գալուստն ու Մեռելոց Յարութիւնը

— Նիկիական հաւատամքին մէջ «Գալոց է նովին մարմնով» խօսքը ի՞նչ կը նշանակէ:

— Յիսուս աշխարհի կատարածին նոյն մարմինով նորէն պիտի գայ:

— Յիսուս երկրորդ անգամ ինչո՞ւ պիտի գայ:

— Դատաստանի համար: Ան պիտի դատէ բոլոր մարդիկը եւ երկինքի թագաւորութիւնը վերջնականապէս պիտի հաստատէ երկրի վրայ ու ինք պիտի թագաւորէ յաւիտեան:

— Յիսուս ի՞նչ քաւ իր երկրորդ գալստեան մասին:

— Յիսուս քաւ թէ իր գալուստէն առաջ պիտի ըլլան պատերազմներ, սովեր, երկրաշարժներ, յանկարծական մահեր եւ այլեւայլ նեղութիւններ: Երկրի վրայ անօրէնութիւնը պիտի շատնայ, հաւատացեալներ պիտի հալածուին իրենց հաւատքին համար, սուտ քրիստոսներ պիտի ելլեն ու շատերը մոլորեցնեն. սակայն այս բոլորով մէկտեղ Աստուծոյ արքայութեան աւետարանը քարոզուած պիտի ըլլայ աշխարհի բոլոր ազգերուն: Այդ նեղութեան օրերէն յետոյ արեգակը պիտի խաւարի եւ լուսինը իր լոյսը պիտի չտայ. երկինքէն աստղեր պիտի իյնան եւ երկնային մարմիններ պիտի սասանին: Ապա պիտի երեւի Մարդու Որդիի նշանը (խաչը) երկինքի վրայ: Այն ատեն երկրի բոլոր ազգերը իրենց կուրծքը պիտի ծեծեն, եւ պիտի տեսնեն Մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ՝ զօրութեամբ եւ մեծ փառքով, եւ որ մեծամեծ փողերով պիտի դրկէ իր հրեշտակները, որոնք պիտի հաւաքեն անոր ընտ-

րեալները չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը:

Յիսուս իր երկրորդ գալուստը կը նմանցնէ երկինքի փայլակին որ արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կը տեսնուի:

— Հրեշտակները ի՞նչ ըսին Յիսուսի երկրորդ գալուստի մասին:

— Յիսուսի համբարձումէն ետք, մինչ առաքեալները ապշած երկինք կը նայէին, երկու հրեշտակներ իրենց երեւնալով ըսին, «Ո՛վ Գալիլիացի մարդիկ, ինչո՞ւ կայներ դէպի երկինք կը նայիք. այս Յիսուսը, որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ՝ ինչպէս տեսաք անոր երկինք երթալը»:

— Պօղոս առաքեալ ի՞նչ կ'ըսէ Յիսուսի երկրորդ գալուստի եւ ընտրեալներու երկինք յափշտակութեան մասին:

— Պօղոս առաքեալ կ'ըսէ՝ «Որովհետեւ երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարարէ եւ Աստուծոյ փողը հնչէ, Տէրը ինք երկինքէն պիտի իջնէ եւ նախ յարութիւն պիտի առնեն անոնք որ Քրիստոսի հաւատացին եւ մեռան: Եւ ապա մեզմէ անոնք, որ այն ատեն դեռ կենդանի պիտի ըլլան, անոնց հետ միասին ամպերու վրայ երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար, եւ այնուհետեւ Տիրոջ հետ պիտի ըլլանք յաւիտեան»:

— Ի՞նչ կը նշանակէ յարութիւն մեռելոց:

— Մեռելներու վերակենդանութիւն, անցք՝ մահէն դէպի կեանք:

Մարդ արարածը կազմուած է հողեղէն մարմինէ եւ կենդանի (անմահ, միշտ ապրող) հոգիէ: Աստուած Ադամին մարմինը երկրի հողէն ստեղծելէ ետք անոր կենդանի հոգի ներփչեց:

Աստուած Ադամին անհնազանդութեան պատճառով անոր եւ անկէ սերածներուն մարմինները մահուան դատապարտեց. սակայն անոնց հոգին փրկելու համար իր

Միածին Որդին աշխարհ ղրկեց: Յիսուս իր յարութեամբ կեանք չնորհեց բոլոր մարդոց, Ո՛վ որ հաւատայ Յիսուս Քրիստոսի, վերջին օրը յարութիւն կ'առնէ եւ կ'արժանանայ երկինքի արքայութեան:

— Մեռնող մարդոց հոգիները ո՞ւր կ'երթան:

— Աստուծոյ խօսքը կ'ըսէ, «Հողը երկիր պիտի դառնայ՝ առաջուան եղածին պէս. ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ՝ որ զայն տուաւ»:

Հաւատացեալներուն հոգիները կ'երթան արդարներուն օթեվանը եւ յոյսով կը սպասեն Քրիստոսի երկրորդ գալուստեան երանութեան, իսկ չարերուն եւ անհաւատներուն հոգիները կ'երթան դժոխք եւ անձկութեամբ կը սպասեն իրենց դատապարտութեան:

— Յիսուս ի՞նչ կ'ըսէ մեռելներու յարութեան մասին:

— Յիսուս կ'ըսէ, «Ժամանակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր (Յարուցեալ Քրիստոսի) ձայնը պիտի լսեն ու գուրս պիտի դան, անոնք որ բարիք գործեր են՝ կենաց յարութեան համար, եւ անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան համար»:

— Յարութիւն առնող հաւատացեալներուն հոգիները ի՞նչ կ'երպարանք պիտի առնեն:

— Յիսուսի փառաւորեալ մարմնոյն կերպարանքով անապական մարմին պիտի առնեն: Պօղոս առաքեալ այն օրուան համար կ'ըսէ, «Ամէնքս պիտի չննջենք, բայց ամէնքս ալ պիտի փոխուինք յանկարծակի, ակնթարթի մէջ՝ վերջին փողը հնչելու ատեն. որովհետեւ փողը պիտի հնչէ ու մեռելները յարութիւն պիտի առնեն ատանց ապականութեան, եւ մենք ալ պիտի փոխուինք: Վասնզի պէտք է որ այս ապականացու մարմինը անապականութիւնը հագնի, ու այս մահկանացուն՝ անմահութիւն հագնի»:

ԻԳ. Դաս

Վերջին Դատաստան, Երկինքի Արքայութիւն եւ Յաւիտեակական կեանք

— Ի՞նչ է վերջին դատաստանը:

— Իր երկրորդ գալուստէն վերջ, Քրիստոսի կատարելիք մեծ դատաստանն է, որու ընթացքին պիտի դատուին բոլոր մարդիկ, եւ բոլոր ծածուկ բաները՝ բարի կամ չար՝ երեւան պիտի ելլեն ու ստանան իրենց հատուցումը:

Յիսուս յաճախ իր քարոզներուն ընթացքին արտայայտուած է վերջին դատաստանի մասին եւ առականրով ալ բացատրած է թէ՛ ամէն մարդ հաշիւ պիտի տայ իր չար արարքներուն համար:

Առաքեալներն ալ միշտ խօսած են Յիսուսի կատարելիք մեծ դատաստանին մասին, թէ՛ այն օրը Քրիստոսի ատեանին առջեւ պիտի ներկայանան բոլոր մարդիկ, ու պատուիրած են հաւատացեալներուն որ զգուշութեամբ անարատ կեանք վարեն իրենց անձերուն փրկութեան համար:

Մեր եկեղեցւոյ շարականներուն մէջ ալ յաճախ յիշուած են Քրիստոսի երկրորդ գալուստն ու վերջին դատաստանը եւ ցոյց տրուած է թէ՛ այդ օրը շատ ահաւոր ու սուկալի պիտի ըլլայ կամակոր մեղաւորներուն համար. սակայն ուրախութեան ու ցնծութեան օր պիտի ըլլայ Քրիստոսի յուսացողներուն համար, որոնք Տիրոջ ողորմութեան արժանանալով պիտի մտնեն երկինքի արքայութեանն ներս:

— Ի՞նչ է երկինքի արքայութիւնը:

— Աստուծոյ փառքն ու թագաւորութիւնն է որ հաստատուած է ամբողջ տիեզերքին համար: Աստուծոյ սիրոյն եւ սրբութեան իշխանութիւնն է, որուն պաշտօնեաները,

զինուորներն ու հպատակները երկինքի հրեշտակներն են: Աստուած իր առատ զթութեամբն ու անսահման ողորմութեամբը առիթ տուաւ Ադամին եւ անոր սերունդին որպէսզի վերանորոգուին ու մտնեն այդ թագաւորութեան մէջ:

— Մարդ արարածը ինչո՞ւ համար դուրս մնացած էր երկինքի արքայութենէն:

— Իր նախածնողաց անհնազանդութեան ու մեղքին պատճառով: Մեղքն ու ապականութիւնը արգելք են ռեւէ մէկուն համար Աստուծոյ առջեւ ներկայանալու: Աստուած սուրբ է եւ կ'ուզէ որ իր թագաւորութեան հպատակներն ալ ըլլան սուրբ եւ անարատ: Ուստի Աստուած մարդ արարածը իր թագաւորութեան մէջ առնելու համար իր Միածին Որդին աշխարհ զրկեց եւ Անոր արեան հեղումով թողութիւն շնորհեց ու որդեգրութիւն խոստացաւ հաւատացողներուն:

— Ո՞վ մոլորեցուց Ադամն ու Եւան եւ ինչո՞ւ:

— Բանսարկու սատանան: Ան նախապէս հրեշտակապետ էր եւ կը կոչուէր Արուսեակ, որ հպարտացաւ եւ սպստամբեցաւ Աստուծոյ դէմ ու իրեն հետ մոլորեցուց մաս մը հրեշտակներ: Աստուած պատժեց զանոնք ու երկինքէն վար ձգեց: Սատանան իր չար հրեշտակներով երկինքէն վնասուելէ ետք, ուզեց իր իշխանութիւնը հաստատել երկրի վրայ, եւ իր չար ծրագիրը յառաջ տանելու համար Ադամը շեղեցուց Աստուծմէ՛ որպէսզի ան ալ դուրս մնար երկինքի թագաւորութենէն՝ իր մեղքին պատճառով: Սակայն Աստուած զթութեամբ մօտեցաւ Ադամին. թէեւ զայն պատժեց, բայց խոստացաւ իր միածին Որդին զրկել աշխարհ, որպէսզի Ան ջախջախէ բանսարկու սատանային գլուխը, ազատէ մարդկութիւնը իրենց մեղքերէն ու հաստատէ երկինքի արքայութիւնը երկրի վրայ:

— Որո՞նք կրնան երկինքի արքայութեան հպատակ դառնալ:

— Ամէն անոնք որոնք կը հաւատան Ամենասուրբ Երրորդութեան եւ Քրիստոսի փրկագործութեան եւ սուրբ Եկեղեցւոյն ներքեւ կը կատարեն Տիրոջ պատուիրանները, կը դառնան Հպատակ եւ ժառանգորդ երկինքի արքայութեան:

— Երկինքի արքայութիւնը վերջնականապէս ե՞րբ պիտի հաստատուի երկրի վրայ:

— Քրիստոսի երկրորդ գալուստէն, վերջին դատաստանէն ետք չար սատանան, իր չար հրեշտակները, եւ իր կամակատար չար մարդիկը պիտի նետուին դժոխքի անշէջ կրակին մէջ: Աշխարհը պիտի մաքրուի. պիտի ստեղծուի նոր երկինք ու նոր երկիր, եւ Քրիստոս փառաց թագաւորը իր բազում հրեշտակներով եւ փրկեալներով պիտի իջսէ նաեւ երկրի վրայ յաւիտեանս յաւիտենից: Երկինքի արքայութեան յաւիտենական ու երանական կեանքին մէջ բոլոր արդարները Քրիստոսի ներկայութիւնը վայելելով ընդմիշտ երջանիկ պիտի ըլլան ու արեւին պէս պիտի փայլին:

Երանի իրենց:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹԻՒՆ

Դաս	էջ
Ա. Քրիստոնէական	11
Բ. Տիեզերական ժողովներ	14
Գ. Նիկիական Հանգանակին Բովանդակութիւնը	19
Դ. Ամենասուրբ Երրորդութիւն	21
Ե. Եկեղեցի	24
Զ. Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն Խորհուրդները	27
Է. Մկրտութիւն	29
Ը. Դրոշմ	32
Թ. Ապաշխարութիւն	35
Ժ. Հաղորդութիւն	38
ԺԱ. Ս. Հաղորդութեան Խորհուրդին Արարողութիւնը (Ս. պատարագ)	41
ԺԲ. Ս. Պսակ կամ Ամուսնութիւն	45
ԺԳ. Զեռնադրութիւն	48
ԺԴ. Զեռնադրութիւն — Բ. Բաժին	52
ԺԵ. Պատուանուններ Հայ հոգեւորական Դասուն	56
ԺԶ. Կարգ Հիւանդաց կամ Վերջին Օծում	58
ԺԷ. Մեղք եւ Շնորհք	61
ԺԸ. Աստուծոյ Պատուիրանները	64
ԺԹ. Եօթը Առաքիւնութիւններ եւ Եօթը Մոլութիւններ	66
Ի. Աղօթք	70
ԻԱ. Պահեցողութիւն	74
ԻԲ. Քրիստոսի Երկրորդ Գալուստն ու Մեռելոց Յարութիւնը	77
ԻԳ. Վերջին Դատաստան, Երկինքի Արքայութիւն եւ Յաւիտենական Կեանք	80

ՏՊԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՑ
ՀԱՅ ՏԻՊ ԲՈՄՓԻԻԿՐԱՖ
ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ